Ազգ
Azg
21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 167 (4785)
ISSN: 1829-1651

# Ե՛վ ափսոսանք, ե՛ւ հպարտություն

Այսօր նշվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակը: Այդ առթիվ նախագահ Սերժ Սարգսյանի՝ սեպտեմբերի 19-ին կազմակերպած ընդունելությանը, որին հրավիրված էին առաջին գումարման ՀՀ ԳԽ եւ բոլոր գումարումների ԱԺ պատգամավորները, ես արտակարգ պատահարի պատճառով չկարողացա ներկա գտնվել. Սիսիանի Նորավան գյուղի խաչմերուկում մեր մեքենան վթարվեց:

Մենք հրավիրվել էինք որպես առաջին գումարման ԳԽ պատգամավորներ: Ուրախ եմ, որ ղարաբաղցի իմ նախկին գործընկերներից շատերը կարողացան մասնակցել այդ հիշարժան միջոցառմանը:

Սեպտեմբերի 2-ին Արցախի նախագահ Բակո Սահակյանն ինձ հանձնեց «Մխիթար Գոշ» մեդալ: Դա իմ առաջին պետական պարգեւն է:

Բայց ինչո՞ւ եմ «կենսագրական» փաստեր նշում:

Այն պատճառով, որ երբ մենք 1989 թ. դեկտեմբերի 1-ին քվեարկում էինք ԼՂԻՄ եւ ՀԽՍՀ վերամիավորման մասին ՀԽՍՀ ԳԽ եւ Արցախի Ազգային խորհրդի համատեղ որոշումը, անկեղծորեն հավատում էինք, որ դա վերջնական եւ անբեկանելի վճիռ է: Այդ իրավական ակտի ուժով էլ 1990 թ. մայիսի 20-ին ԼՂԻՄ-ում անցկացվեցին Հայաստանի ԳԽ ընտրություններ, եւ մենք՝ մի խումբ արցախցիներ, դարձանք ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր:

Դա ծանր, բայց եւ հերոսականորեն հրաշալի ժամանակ էր: Եվ բոլորս դարձյալ հավատում էինք, որ երբ դժվարությունները հաղթահարվեն, մենք կունենանք միասնական հայրենիք:

Քսան տարի հետո մենք երկու տոն ենք նշում՝ ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի անկախությունը:

Դրա համար է, որ ունեմ ափսոսանքի զգացում: Չէ՞ որ քսան տարի առաջ նաեւ արցախցիներս ենք քվեարկել ՀՀ Անկախության հռչակագրի օգտին՝ որպես միասնական պետության քաղաքացիների ընտրյալ ներկայացուցիչներ:

Բայց սեպտեմբերյան տոները ներարկում են նաեւ մեծ հպարտություն: Չէ՞ որ, անկախ ամեն ինչից, Արցախն այսօր ազատ է՝ որպես միասնական հայկական անկախ եւ ինքնիշխան հանրության ու հայրենական տարածքի այլեւս անօտարելի մաս:

Եվ ինչ գեղեցիկ էր լինելու, եթե, ինչպես Ազգային ժողովում կազմակերպված ընդունելությանն իր խոսքում ասաց նախագահ Սերժ Սարգսյանը, տոնական «սեղանին դատարկ աթոռներ» չլինեին:

Դարձյալ ափսոս, որ այդպես չեղավ: «Դատարկ աթոռներ» կային, եւ դա տեսանելի էր անգամ հեռուստատեսությամբ տարածված կադրերից:

Շատ կուզենայի, որ ՀՀ անկախության 30-ամյա հոբելյանը նշվեր որպես իրավականորեն միասնական դարձած երկրի պետական տոն: Եվ «դատարկ աթոռներ» եթե լինեին, ապա միայն՝ կյանքի պարտադրանքով: Եվ երբեք՝ քաղաքական մանրախնդրության:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

# Անկախությունը ապրելու ձեւ է

Անկախության 20 տարին, անկախ ամեն ինչից, Հայաստանում մտածողություն է փոխել, չնայած այս պահին առկա քաղաքական անհանդուրժողականությանը եւ միմյանց մերժելու կարծրացած սովորույթին, վատ ապրելակերպին, զանազան հոռի երեւույթներին: Այնուամենայնիվ՝ անկախության ըմբռնման առումով հասարակության գիտակցության մեջ տեղաշարժեր, անգամ կարելի է ասել՝ հեղափոխություն է եղել, անկախությունն այլեւս հայ ժողովրդի մեր հատվածի կեցության ձեւն է: 1991 թվականին, Հայաստանի անկախությունը հռչակելու օրերին, ի շարս ընդհանուր ոգեւորության ու ոգեւորվածների մեծ թվի, դեռեւս դիմադրողներ կային, եւ հատկապես մեծահասակները, որոնց խուճապի էր մատնում այն միտքը, թե ոչ ոք այլեւս ձեռքը բռնած իրենց ճանապարհ ցույց չի տալու, եւ փոքրիկ Հայաստանն ինքնուրույն է անցնելու իր ճամփան՝ այնքան որ ինքնուրույն մտածելուց հետ էին սովորել:

Հիմա հարցրեք առաջին պատահած հայի՝ նա չի պատկերացնի, որ Հայաստանը կարող էր անկախ չլինել. անկախությունն արդեն միս ու արյուն է դարձել, մեր կյանքի ամենակարեւոր բաղադրիչը դարձել՝ սկսած անձնագրից, վերջացրած նրանով, որ երկրից դուրս ամեն մեկս, անգամ որպես ինքնաթիռի ուղեւոր անկախ Հայաստանի Հանրապետությունն ենք ներկայացնում՝ ամեն մեկս պատասխանատվության մեր մասով:

Ծնվել ու մեծացել է նոր սերունդը՝ 20 տարեկանների, անկախության տարեկիցների, ով այլ բան չի տեսել ու չի պատկերացնում, քան անկախությունը, անկախ Հայաստանի քաղաքացի լինելու փաստը: Ուրիշ բան, որ այդ ընկալմանը զուգահեռ, նա, տիրոջ իրավունքով, կարող է նաեւ քննադատել իր պետությունում առկա բացերը, դժգոհել, հումորով կամ անհաճո խոսել այնտեղ առկա հոռի երեւույթների մասին, սակայն՝ տիրո՛ջ իրավունքով, ունեցածը սթափ գնահատողի, ունեցվածք ու երկիր ունեցողի իրավունքով: Պետության եւ անկախության երաշխավոր բանակի գիտակցումը բոլորն ունեն, բայց եթե բանակում կոռուպցիա կա, թերություններ, զինվորներ են մահանում, դրա դեմ անհաշտ պայքարի գործն էլ մերն է՝ չենք թաքցնի ու կոծկի, էլի տիրո՛ջ իրավունքով, սեփական տունն ու ընտանիքն ավելի լավ տեսնելու ակնկալիքով: Բայց որ անկախ երկրի բանակն է մեր ուժը, երկրի գլխավոր ատրիբուտը՝ այսօրվա ռազմական շքերթն է վկա: Արցախի անկախություն ենք նվաճել՝ սա անշրջելի հաջողություն է, Արցախում առկա թերությունները (Հայաստանի թերությունների միկրոպատկերը) չենք ժխտում, դրա դեմ միջոցներ ենք որոնում, բայց Արցախի անկախությունն արդեն անգին գանձ է, մեր անկախության 20-ամյակի բաղադրիչ, սա անժխտելի է:

Անկախ Հայաստանի մյուս բաղադրիչները՝ Ազգային ժողովը, կառավարությունը, կարելի էր ավելի կատարյալ տեսնել, չենք ժխտում, մեծ անելիք կա, որ խորհրդարանը լինի բարձր ինտելեկտուալների միագումար, որ կառավարությունը կազմվի միայն արժանի եւ բարձր պրոֆեսիոնալ մարդկանցից, սակայն ունենք այն, ինչ ունենք, ինչ անկախության 20 տարում ենք հասցրել արդյունավորել, այս 20 տարվա գործն են եղել դրանք, իսկ որակ, արդյունք եւ դեպի ապագա միտում մյուս 20-ամյակում պետք է ապահովենք:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# «Երանի՜ Մատենադարան կառուցողին»



«Երանի այն հային, ով Մատենադարան կկառուցի». ահա այս խոսքերը Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը** երեկ ուղղեց Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցման համար 10 մլն դոլար ներդրած մոսկվաբնակ բարերար **Սերգեյ Համբարձումյանին**, Մատենադարանի նոր շենքի բացման հանդիսության ժամանակ: Նույն կերպ՝ ժողովրդին հասկանալի լեզվով նախագահ Սարգսյանը նաեւ արժեւորեց շենքը նախագծած եւ իրականացրած ճարտարապետ **Արթուր Մեսչյանին**. «Այս կառույցով, Ձեր գործունեությամբ դուք ապացուցեցիք, որ Հայկը երբեք չի պարտվի ոսոխ Բելին, չնայած Ձեր երգում հակառակն եք ասում»: Ընդհանրապես Մատենադարանի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նոր մասնաշենքի բացման արարողությունը եւ դահլիճային հանդիսությունը շատ ոգեղեն էին՝ Ամենայն հայոց եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսների ներկայությամբ եւ օրհնությամբ, հայկական զույգ հանրապետությունների՝ Հայաստանի եւ Արցախի նախագահների մասնակցությամբ, արտերկրի եւ տեղի գիտնականների հայացքի ներքո: Մատենադարանի նոր մասնաշենքը մի հիանալի կառույց է, 3 անգամ ավելի մեծ, քան գլխավոր եւ հին մասնաշենքն է, ամենաարդիական ճարտարապետական նվաճումների օգտագործմամբ, որոնք սակայն շատ լավ համադրված են գլխավոր մասնաշենքի ճարտարապետական լուծումների հետ: Շենքն օժտված է ձեռագիր եւ տպագիր մատյանների պահպանության եւ վերականգնման համար հարկավոր բոլոր նորագույն սարքավորումներով եւ տեխնոլոգիաներով: Վերջին երեք տարում Մատենադարանի ձեռագիր հավաքածուն համալրվել էր 1400-ից ավելի ձեռագրերով, հասնելով 18 հազար միավորի: Տասնյակ հազար միավորներով համալրվել են նաեւ արխիվային փաստաթղթերը, հնատիպ գրքերը, այնպես որ ապահով նոր շենք ունենալու եւ միջազգային չափանիշներով ձեռագրերի վերականգնման հնարավորությունների խնդիրը վաղուց էր հասունացել:

Տես էջ 2

# Դինքի սպանությունը «Էրգենեքոնն» է կազմակերպել

**Այդ մասին, ինչպես երեկվա համարում նշել է «Հյուրիեթ»-ը, ասել է հանգուցյալ Դինքի սպանության գործով դատախազ Հիքմեթ Ուսթան: Նա ասել է, որ Դինքի սպանությունը չի կարելի պայմանավորել սոսկ ազգայնամոլ երիտասարդների գործողությամբ, դա ընդհատակյա խիստ գաղտնի գործունեություն ծավալող «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության Տրապիզոնի մասնաճյուղի գործն է: Ըստ դատախազի՝ սպանությունն իրականացնողների հեռախոսազրույցների գաղտնալսումների սղագրությունը 2005-ին անհետացել էր, այդ իսկ պատճառով իրավապահ մարմիններին անհասանելի են մնում բուն կազմակերպիչները:**

**Դատախազ Ուսթան սպանությունն իրականացնելու, Թուրքիայի Հանրապետությունում սահմանադրական կարգերի տապալմանն ուղղված փորձեր կատարելու մեղադրանքով Էրհան Թունջերի եւ Յասին Հայյալի համար պահանջել է կրկնակի խստացված ռեժիմով ցմահ բանտարկություն: Նույն մեղադրանքով ցմահ բանտարկության են դատապարտվելու սպանության գործով մեղադրվող եւս 4 անչափահասներ, իսկ մնացածները սպանությանը նպաստելու համար կդատապարտվեն մինչեւ 4 տարի ազատազրկման:**

Հ. Չ.

# «Այսօր հային հայ պահելու առաջնային խնդիր ունենք»

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ




Ավարտվեց Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների համահայկական 3-րդ համաժողովը: Համաժողովին «**Ազգ**»-ը անդրադարձել է: Երեկ կեսօրին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կլոր դահլիճում համաժողովի աշխատանքներին մասնակցած սփյուռքյան կառույցների ղեկավարներ, հոգեւոր հայրեր, սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանի** գլխավորությամբ մասնակցեցին մամուլի ասուլիսին եւ պատասխանեցին լրագրողների հարցերին: Նախարարն ամփոփելով համաժողովի արդյունքները, ասաց. «Սեպտեմբերի 18-21-ը կազմակերպված Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների եւ ներկայացուցիչների համաժողովի երկու օրերի ընթացքում եղան 115 զեկույցներ տարբեր թեմատիկ նիստերում, բարձրացվեցին տարբեր հարցեր, որոնց շուրջը կծավալվեն ու սփյուռքին տեղյակ կպահվի, թե ինչ լուծումներ են տրվել ու ծրագրեր են կազմվել: Բոլոր այդ հարցադրումները կդառնան օրակարգային՝ նախարարության համար եւ ուշադրության կենտրոնում կպահվեն լեզվի, կրթության, հեռուստաեթերներում սերիալների, մամուլի լեզվի եւ շատ ու շատ բարձրացված խնդիրները ու հարցերը»:

Համաժողովի նախօրեին մասնակիցներն այցելել են Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր ու ծաղկեպսակներ դրել, իսկ հետո մասնակցել «Պոլսահայ համայնքի օրեր» միջոցառումներին: Համաժողովն իր աշխատանքներն ամփոփեց ընդունված հռչակագրով, որում նշված են ազգի առաջ ծառացած խնդիրները եւ դրանք միասնական, համախմբված ուժով լուծելու ուղիները: Միջոցառումները դեռ կշարունակվեն, իսկ արձագանքներն ու արդյունքները պարզ կլինեն առաջիկայում: Միայն մի կարեւոր բան այժմ նշմարվեց՝ քովքովի էին եկել Սփյուռքի բոլոր կառույցների, կուսակցությունների, քաղաքական տարբեր դիրքորոշումների մարդիկ ու մտահոգ էին մեր երկրում տիրող իրավիճակին՝ կոռուպցիա, արտագաղթ, սոցիալական խղճուկ վիճակ, օրեցօր ահագնացող օլիգարխիա եւ այլն:

«**Ազգ**»-ի հարցին, թե ի՞նչ տվեց այս համաժողովը, երբ նախորդ երկուսը սոսկ ծանոթության բնույթ էին կրել, Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանն** ասաց. «Եթե մենք առաջ գալիս էինք այստեղ ու չկար կառույց, որ մեր հարցերը բարձրացնեինք, այսօր կա սփյուռքի նախարարություն, որին մեր ծրագրերը հստակորեն ներկայացնում ենք եւ ուզում ենք, որ երիտասարդները իրենց կյանքն այս երկրում կառուցեն:

Տես էջ 2

ԱԶԳ **Ընթացիկ**

# Հայաստանում օրենքները շատ-շատ են

## *Գործարկվող համակարգը դրանք կկրճատի մոտ 30 տոկոսով*

«Մենք կրճատելու ենք այդ բիզնես գործառույթները՝ նպատակ ունենալով կրճատել բյուրոկրատական քաշքշուկը, ավելորդ գործառույթները, կրկնությունները, անիմաստ թույլտվությունները: Ծրագրում ենք, որ բյուրոկրատական գործառույթներն առնվազն 30 տոկոսով կկրճատվեն»: Խոսելով «ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխման խորհուրդ ստեղծելու եւ տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգման մասին» նախագահի հրամանագրով նախատեսվող համակարգի գործարկման մասին, կառավարության նիստերից մեկում այդ մասին որոշ տեղեկություններ հաղորդեց վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Նրա ներկայացմամբ, երկարաժամկետ առումով, այդ համակարգի գործարկման արդյունքում անհրաժեշտություն կլինի կրճատել պետական ապարատը, ավելորդ բաժինները, վարչությունները, ինչի արդյունքում կբարձրանա աշխատանքի որակը, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը:

Ինչպե՞ս է դա տեղի ունենալու, ե՞րբ, ի՞նչ միջոցներով: Այս եւ այլ հարցերի պատասխանները ստանալու համար դիմեցինք էկոնոմիկայի փոխնախարար **Կարինե Մինասյանին**: Փոխնախարարը նշեց, որ այս համակարգի ստեղծման նպատակն է երկրի գործարար միջավայրն ու տնտեսության զարգացումը խոչընդոտող դրույթների վերացումը, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավումն ու պարզեցումը: Դրա համար պետք է իրականացվեն մեր օրենսդրական կարգավորման դաշտի գույքագրում եւ վերանայում:

Հայաստանում մոտ 26 հազար օրենքներ եւ օրենսդրական փաստաթղթեր են գործում, ինչն, ըստ Կարինե Մինասյանի, մեր երկրի նման փոքր երկրի համար, շատ-շատ է: Ստեղծված իրավիճակի կարգավորման ուղիներ գտնելու հարցով Հայաստանի կառավարությունը խորհրդակցել է միջազգային փորձագետների, այդ թվում՝ այս ոլորտում աշխարհի լավագույն փորձագետ Սկոթ Ջեյկոբսի հետ: «Հասկացանք, որ կարգավորման հնարավորությունը իրական է», ասաց էկոնոմիկայի փոխնախարարը: Այնուհետեւ խորհրդակցություններ եղան դոնոր երկրների հետ, եւ վերջիններս համաձայնեցին ֆինանսավորել այդ գործընթացը, որի ընդհանուր արժեքը կկազմի 2 մլն դոլար:

Ստեղծվելու է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրի իրագործման գրասենյակ (ԾԻԳ), որը կգործի 24 ամիս, ուսումնասիրելու է օրենսդրությունը եւ ներկայացնելու իր առաջարկները, թե ի՞նչ ավելորդություններ, կրկնվող նորմեր եւ բիզնեսին խոչընդոտող, քաղաքացիներին խանգարող դրույթներ հարկ է վերացնել կամ վերանայել: Իր առաջարկները ԾԻԳ-ը կներկայացնի Արդյունավետ կառավարման (տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների) խորհրդին: Վարչապետի նախագահությամբ գործող խորհրդի կազմում են նախագահի գլխավոր խորհրդականը, արդարադատության, էկոնոմիկայի, ֆինանսների նախարարները: Եռամսյակը մեկ անգամ կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն պետք է ներկայացնի երկրի նախագահին: Խորհուրդը քննարկելու եւ եզրակացություններ է տալու ԾԻԳ-ի առաջարկների վերաբերյալ, որոնք օրենսդրական փոփոխությունների տեսքով կներկայացվեն կառավարության հաստատմանը: Այսինքն, նախարարություններում եւ պետական գերատեսչություններում առաջարկվող փոփոխությունները այլեւս չեն շրջանառվի, քանի որ, նախ՝ դա բավական երկար կտեւի, երկրորդ՝ հնարավոր է, որ մեծ դիմադրություն լինի առաջարկվող բարեփոխումներին: Այս առումով Կարինե Մինասյանը կարեւորեց երկրի նախագահի եւ վարչապետի աջակցությունը, ինչը կօգնի հաղթահարել հնարավոր հակազդեցությունը:

Էկոնոմիկայի փոխնախարարը հայտնեց, որ պատրաստվելիք առաջարկները քննարկվելու են բիզնեսի հետ եւ բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ: Առաջնային է լինելու բիզնես միջավայրի բարելավման հարցը:

Ինչպես տեղեկացրեց մեր զրուցակիցը, մինչ այս համակարգը Հայաստանում գործարկելու նպատակահարմարության հարցը քննարկելը ուսումնասիրվել է միջազգային փորձը: Մի շարք երկրներում՝ Մեքսիկա, Հարավային Կորեա, Մոլդովա, Խորվաթիա, օրենսդրության վերանայման եւ կարգավորման համարգեր գործարկվել են եւ բարձր արդյունավետություն ունեցել: Այդ բոլոր երկրներում արձանագրվել է բիզնեսի ծախսերի կրճատում, ներդրումների եւ աշխատատեղերի աճ, համախառն ներքին արդյունքի աճ:

«Ի՞նչ արդյունքների պետք է սպասենք մենք»՝ մեր հարցին ի պատասխան՝ էկոնոմիկայի փոխնախարարն ասաց, որ թիրախը օրենսդրական դաշտի 30 տոկոս կրճատումն է: Իսկ թե որքա՞ն են նվազելու բիզնեսի ծախսերը, որքա՞ն աշխատատեղեր են ստեղծվելու եւ ներդրումներ ավելանալու, հնարավոր կլինի կանխատեսել այս գործընթացի ընթացքում:

«Հարկային եւ մաքսային բարեփոխումների, փոքր եւ միջին բիզնեսի աջակցության նպատակով ստեղծված կառույցների գործունեությունը չի՞ կրկնի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի» գործառույթները» հարցին Կարինե Մինասյանը բացասական պատասխանեց, ասելով, որ կան հարցեր, որոնք օպերատիվ լուծումներ են պահանջում եւ չի կարելի դրանք հետաձգել մինչ օրենսդրական ընդհանուր կարգավորման հարցերի լուծումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Այսօր հային հայ պահելու առաջնային խնդիր ունենք»

*1-ին էջից*

Կարեւոր է Հայաստան-Սփյուռք կապերն ամրապնդել, եւ այս համաժողովն առաջին քայլերն է անում բարձրացված հարցերին ու խնդիրներին միասնական որոշումներով լուծումներ տալու: Իսկ համաժողովի անցկացումը մեծ հաղթանակ է: Կարեւորն այն է, որ տնտեսական համագործակցության կառույցները գործեն, որոնք մեխանիզմներ են եւ որոնցով հստակ շատ ծրագրեր կիրագործենք, ու այդ խնդրում սփյուռքի նախարարությունը պատասխանատվություն է կրում»:

Ասուլիսին մասնակից հոգեւոր հայրերը ու տարբեր կառույցների ներկայացուցիչները գոհ էին համաժողովի աշխատանքներից եւ նշում էին, որ հնարավոր եղավ համախմբվել ու ներկայացնել թե Սփյուռքի եւ թե հայրենիքի ցավերը, որն էլ հնարավորություն ստեղծեց միասնական գործելու ծրագրեր մշակել:

Հրանուշ Հակոբյանը, պատասխանելով արտագաղթին վերաբերող հարցին, ասաց. «Արտագաղթը պետության հիմնական խնդիրն է. հային հայրենիքում պահելը, իսկ սփյուռքին հորդորել, որ հայրենիքում աշխատատեղեր բացեն, արդեն 600 ընտանիք հայրենադարձվել է: Այսօր Հայաստանում փոքր եւ միջին 4000 բիզնես է գրանցված, որի 80 տոկոսը սփյուռքահայերինն է»: (Որտեղի՞ց է վերցրել տիկին նախարարն այս տվյալը, մեզ անհայտ է մնում: Խմբ.): Պրն Աբրահամյանն ավելացրեց, որ եթե ամեն մի հայ գործարար իր պես մի քանի ներկայացուցիչ ունենա Հայաստանում, տեղյակ լինի, թե հայրենիքում ինչ է կատարվում տնտեսական ոլորտում, մեծ օգնություն ցուցաբերած կլինի: «Ազգ»-ի հարցին՝ ինչ ակնկալիքներ կային համաժողովից եւ ինչ տվեց, նախարարն ասաց. «Ակնկալիքներն ակնհայտ են: Առաջին՝ համաժողովը կայացավ, երկրորդ՝ համաժողովը համահայկական բնույթ ստացավ, որին մասնակցում էին երկրի ղեկավարը, երկու կաթողիկոսները, կուսակցությունների, բոլոր համահայկական կառույցների, պետական քաղաքական այրերը, երրորդ՝ ստեղծվեց մի ցանց, որտեղ մեկը մյուսին ճանաչեց ու մեկը մյուսից շատ բան սովորեց, 30 առաջարկներ արվեցին, որոնք պետք է զարգացնել եւ միս ու արյուն տալ դրանց: Մյուս համաժողովը կանենք 6000-տեղանոց դահլիճում եւ կընդգրկենք նրանց, ովքեր այս համաժողովին չկարողացան ներկա գտնվել»: Նախարարը նաեւ առաջարկեց մեկ հատուկ օր ընտրել համայն հայության համար ու բոլորին հավաքել մայր հայրենիքում:

Իսկ թե ինչպես եւ որտեղ կտեղավորվեն 7-10 միլիոն հայերը, առայժմ պարզ չէ:

ՓԱՌԱՎՈՐ ԲԱՑՈՒՄ

# «Երանի՜ Մատենադարան կառուցողին»

*1-ին էջից*

Բացի դրանից՝ վերջին տարիներին երիտասարդ գիտնականներ եւ ձեռագրագետներ են եկել Մատենադարան՝ 150 մարդ: Այնպես որ ձեռագրերի եւ գրադարանային ֆոնդերի պահպանության, վերականգնման, թվայնացման աշխատանքների կազմակերպման, գիտաշխատողների սպասարկման, գիտաժողովների անցկացման տեսակետից նոր մասնաշենքի կառուցումը հրամայական էր, իսկ Մատենադարանի սուղ տարածքների պատճառով ձեռագիր գանձերի մի չնչին մաս էր ցուցադրվում: Մատենադարանի նոր մասնաշենքի ճարտարապետ Արթուր Մեսչյանը հիշեց (Մատենադարանի մասին դահլիճում ցուցադրված ֆիլմում), որ դեռեւս 1985-ին նոր մասնաշենքն սկսել էր կառուցվել, երկրաշարժն ու հետագա իրադարձությունները ընդհատեցին դա, եւ միայն վարչապետ Սերժ Սարգսյանի շնորհիվ մի քանի տարի առաջ ուրվագծվեց Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցման հեռանկարը: Հետո գտնվեցին բարերարներ, Մեսչյանը մեծ ներշնչումով նախագծեց, եւ ահա երկուուկես տարում նոր համալիրի շինարարությունն իրականություն ու նվեր դարձավ Հայաստանի անկախության 20-ամյակին:



Երեկ Հայաստանի նախագահը եւ մյուս հյուրերը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հանդիսապետությամբ, մասնակից եղան մասնաշենքի նավակատիքի արարողությանը, ձեռագրատան խորանում հնագույն ձեռագրի տեղադրմանը, ընթերցասրահի եւ ցուցասրահի բացմանը, դիտեցին վերականգնման լաբորատորիաները, արխիվային պահոցներն ու աշխատասենյակները, ապա իջան երրորդ հարկի դահլիճ, ուր ներկաները քիչ ոգեղեն խոսքեր չլսեցին ե՛ւ Մատենադարանի տնօրենից ե՛ւ երկրի նախագահից, ե՛ւ զույգ կաթողիկոսներից:

Նախագահ Սարգսյանն իր խոսքում գնահատեց. «Մատենադարանը մեր ամեն ինչն է՝ լեզուն, գրականությունը, պատմությունը, գիտությունը, ծննդյան վկայականն ու կենսագրությունը, մեր գալիք բոլոր հաղթանակների խարիսխը, մեր մշտական ու հարուստ մեկնակետը»: Անգամ Պարույր Սեւակ մեջբերեց՝ «Մե՛զ չեն վկայում, մենք ենք վկայում, Հասնելով ուրի՛շ ժամանակների...»: Նա հիշեց եւ մեր 1600-ամյա գիրը, եւ առաջին հայկական գրքի՝ եկող տարի նշելիք 500-ամյակը՝ նկատելով, որ այս նոր մասնաշենքը տարիների երազանք է եղել բոլորի համար: Շնորհակալ եղավ մատենադարանցիներին, մասնաշենքի իրականացման համար ներդրումներ արած բարերարներին, ճարտարապետներին եւ շինարարներին, ապա խոստացավ. անկախության տոնակատարությունից անմիջապես հետո սկսվելու է Մատենադարանի հին՝ գլխավոր շենքի եւ շենք բերող ճանապարհի նորոգումը, այդ աշխատանքները ծրագրված է ավարտել եկող տարի, հայ գրատպության 500-ամյակի տոնից առաջ, եւ 2012-ին գրքի համաշխարհային մայրաքաղաք հայտարարված Երեւանի հյուրերը նաեւ նորոգված կտեսնեն թանգարանի եւ ցուցասրահի վերածված գլխավոր մասնաշենքը:

Նախագահի անունից նաեւ պարգեւներ հանձնվեցին Մատենադարանի շենքն իրականացրած բարերարներին, շինարարներին, ճարտարապետին: Ընդ որում՝ նախ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով պարգեւատրվեց ՌԴ գործարար Սամվել Կարապետյանը (սա կապ չուներ Մատենադարանի շենքի հետ, նախագահը հարկ էր համարել ուղղակի այս շենքում նրա բարերարությունը եւ ազգային գործերում արված ներդրումները գնահատել): Արթուր Մեսչյանը պարգեւատրվեց Մեսրոպ Մաշտոցի շքանշանով, Սերգեյ Համբարձումյանը՝ Պատվո շքանշանով: Տարբեր անվանակարգերի պարգեւներ ստացան Մակար Նահապետյանը, Ֆելիքս Փիրումյանը, Հրաչյա Թամրազյանը, Վանիկ Խաչատրյանը, Երջանիկ Սամուելյանը, Միհրան Մինասյանը, Ջուլիետա Էյնաթյանը, Ալբերտ Կարախանյանը (հետմահու):

Հույս ունենալով, որ «**Ազգի**» առաջիկա համարներից մեկում ավելի մանրամասն կպատմենք ե՛ւ Մատենադարանի, ե՛ւ նոր մասնաշենքի կառուցմանը նպաստած բոլոր բարերարների մասին, եզրափակենք Մատենադարանի տնօրեն Հ. Թամրազյանի խոսքով. «Սա միջազգային նշանակության կառույց է, մենք նպատակ ունենք զարգացնել հայագիտությունն աշխարհում: Առաջին հերթին ազդակը պիտի լինի Հայաստանից: Մենք չենք կարող նստել-սպասել, թե ե՞րբ երկնքից մանանա կիջնի մեզ համար: Ամեն օր պիտի աշխատենք, եւ այդպիսի մեղվաջան աշխատանքի շնորհիվ է, որ Մատենադարանի այս կառույցը ստեղծվեց»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Մեկ աշխատավարձ՝ տոնի կապակցությամբ

**Անկախության 20-ամյակի կապակցությամբ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը բազմաբնույթ միջոցառումներ է իրականացրել՝ տոնական համերգներ, գիտաժողովներ, հանդիպումներ հեղինակավոր գիտնականների հետ եւ այլն:**

**Հանրապետության անկախության հոբելյանի կապակցությամբ Մանկավարժական համալսարանի ղեկավարությունը անակնկալ էր պատրաստել իր աշխատակիցների համար. մեկ աշխատավարձի չափով պարգեւատրել է համալսարանի բոլոր աշխատակիցներին՝ 1600 հոգու:**

**Հիշեցնենք, որ այս տարի 40 տոկոսով արդեն բարձրացել է ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաեւ մյուս աշխատակիցների ամսական աշխատավարձը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Արեւելյան գործընկերներից ոմանք եվրոպացի ձեւանալ էլ չեն կարողանում

Երբ Եվրոմիությունը նախաձեռնում ու ներկայացնում էր իր արեւելյան հարեւանների համար նախատեսված «Արեւելյան գործընկերություն» նախագիծը (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա), որպես հիմնական մոտեցում ներկայացվում էր եվրոպական այն դիրքորոշումը, թե յուրաքանչյուր երկիր դիտարկվելու է ըստ էության առանձին, թեեւ ողջ տարածաշրջանը եւս Եվրոմիության համար ընդհանրական մոտեցմամբ է բնութագրվում:

Արեւելյան գործընկերության խորհրդարանական ձեւաչափ հանդիսացող Եվրոնեսթի վեհաժողովի առաջին հանդիպումը, որ ի վերջո տեղի ունեցավ Արեւելյան գործընկերության հինգ երկրներից 10-ական պատգամավորի եւ ԵՄ 60 պատվիրակի մասնակցությամբ ու առանց Բելառուսի ներկայացուցիչների, անընդհատ հետաձգվում էր՝ աշնանից գարուն, գարնանից աշուն տեղափոխվելով: Իսկ երբ ի վերջո կայացավ սեպտեմբերի 14-15-ին Ստրասբուրգում, ընդամենը ապացուցեց, որ մեր տարածաշրջանում ու ընդհանրապես ԵՄ-ի արեւելյան հարեւանների առումով հարաբերությունները դեռեւս որոշվում են ոչ թե առաջ գնալու ցանկությամբ, այլ ամեն հարթակ սեփական շահերին ծառայեցնելու ու, ինչպես ասում են, «իրենց էշը քշելու» համար:

«**Ազգը**» դեռեւս այս տարեսկզբին էր մի քանի հրապարակումներով անդրադարձել «Եվրոնեսթի» խորհրդարանական ձեւաչափի՝ հակամարտությունների առումով «տուժած» երկրների քաղաքականության հարթակ դառնալու հավանականությանը, ինչն էլ ապացուցեց ստրասբուրգյան հանդիպումը:

Եվրոնեսթ խորհրդարանական վեհաժողովի առաջին լիագումար նիստի օրակարգում սեպտեմբերի վերջին Վարշավայում կայանալիք գագաթաժողովին քննարկելու մեկ զեկույցի նախագիծ էր՝ Արեւելյան գործընկերության հեռանկարների մասին, որն այդպես էլ չընդունվեց: Զեկույցը, համահեղինակությամբ վրացի պատգամավոր Դավիթ Դարչիաշվիլու եւ ռումինացի պատգամավոր Տրայան Ունգուրյանուի, 60-րդ դրույթով բավական չէ անտեղի հիշեցնում էր հակամարտությունների մասին, դեռ դրանք էլ մատուցվում էին միայն տարածքային ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքով:

Վրացական այս ձեւակերպումը հաստատապես ադրբեջանցիների ու մոլդովացիների սրտով էր, թեեւ հակամարտությունների կարգավորման միջազգային սկզբունքներին հղում անող ամեն մի սկսնակ գիտի, որ դրանք առնվազն երեքն են՝ ուժի չկիրառման եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների հետ, եթե հստակ որպես հիշատակվում են որպես հելսինկյան: Բնականաբար, հայկական պատվիրակությունը չէր կարող համաձայնել նման ձեւակերպմանը, իսկ այդ անհամաձայնությանն ընդառաջ եվրոպացիների՝ դրույթը վերաձեւակերպելու կամ ընդհանրապես հանելու առաջարկները լսելու եւ ընկալելու կարողություն չի դրսեւորվել ադրբեջանական ու վրացական կողմից (մոլդովացիներն առավել առաջադեմ են գտնվել):

Ադրբեջանի ու Վրաստանի պատվիրակների համառությանն ի պատասխան հայաստանյան պատվիրակությունն էլ հարցը վեհաժողովի քաղաքական հանձնաժողովից տեղափոխեց Եվրոնեսթի բյուրո: Արդեն լիագումար նիստում ոչ մի առաջարկ չստացավ անհրաժեշտ ձայների քանակը, հայաստանյան պատվիրակությունը զեկույցի նշված դրույթը Հայաստանի անվտանգության համար կենսական նշանակություն ունեցող խնդիր որակեց ու պահանջեց կոնսենսուս: Դրան, իհարկե, չհասան ու այդպիսով զեկույցը չընդունվեց, եւ ըստ այդմ՝ չի ներկայացվի Վարշավա՝ Արեւելյան գործընկերության երկրորդ համաժողովին, որին մասնակցելու են Արեւելյան գործընկերության երկրների նախագահները, այդ թվում՝ Հայաստանի:

Հայկական պատվիրակությունը վեհաժողովից մի քանի օր անց հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ զեկույցը չընդունվեց եւ կոնսենսուսը խաթարվեց ադրբեջանական եւ վրացական պատվիրակությունների ոչ կառուցողական գործելաոճի պատճառով: Հայտարարությամբ նշվում է. «Ափսոսանքով արձանագրում ենք, որ իրականություն դարձան կանխատեսումներն առ այն, որ Եվրոնեսթի որոշ պատվիրակություններ չեն կարողանալու խուսափել այդ կազմակերպությունը անպտուղ բանավեճերի բեմահարթակ դարձնելու գայթակղությունից՝ շեղելով Եվրոնեսթը իր հիմնական նպատակից՝ արեւելյան գործընկերների եվրոպական ինտեգրացիայից: Այդուհանդերձ, արձանագրենք նաեւ, բոլոր նրանք, ովքեր թյուրիմացաբար կարծում էին, թե հայկական պատվիրակությանը հնարավոր է պարտադրել մեր ազգային շահերին հակասող զիջումներ, ստիպված կլինեն հետայսու վերանայել «փոխզիջում» հասկացությունը միակողմանի զիջումով նենգափոխելու իրենց միտումները»:

Դեռ մեկ հանդիպումը չավարտված՝ հաջորդի խնդրահարույց լինելու հարցն է առաջացել, քանի որ Եվրոնեսթի երկրորդ լիագումար նիստը կարող է անցկացվել գարնանը եւ արդեն Բաքվում: Թե որքանով կապահովվի եւ արդյոք ընդհանրապես կապահովվի հայաստանյան պատվիրակության մասնակցությունը նիստին՝ այլ հարց է, բայց որ խորհրդային ժամանակներում իրենց հասկացված սահմանները վերականգնելու երազանքներ ունեցող երկրների խորհրդարանականները դժվար թե առավել կառուցողական լինեն՝ կարելի է ենթադրել: Ուստի Եվրոնեսթի գոյության նպատակահարմարությունը, որքան էլ լավատեսները շատ լինեն, քննարկելու կարիք կզգացվի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Նկատելի ձեռքբերումներ եւ վիզային ռեժիմի դյուրացում

**Հայաստանը հետեւողական աշխատանքի շնորհիվ նկատելի ձեռքբերումներ է գրանցել Արեւելյան գործընկերության շրջանակներում Ասոցացման համաձայնագրի մեջ ներառված չորս հիմնական պլատֆորմների մասով: Այս մասին փաստել է ինչպես Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, այնպես էլ Հայաստան-Եվրոպական Միություն Ասոցացման համաձայնագրի բանակցություններին եվրոպական կողմի գլխավոր բանակցող Գունար Վիգանդը՝ երեկ տեղի ունեցած հանդիպմանը:**



**Ըստ ԱԳՆ հաղորդագրության՝ Նալբանդյանն ու Վիգանդը համգամանալից քննարկել են Ասոցացման համաձայնագրի շուրջն ընթացող բանակցությունների ներկայիս ընթացքը, նաեւ ամփոփել 2010թ.-ից առ այսօր ունեցած ձեռքբերումները, անդրադարձել են Հայաստան-ԵՄ հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերի՝ միեւնույն ժամանակ բարձր գնահատելով երկկողմ փոխգործակցության ներկայիս տեմպերը:**

**Նալբանդյանն ընդգծել է, որ Ասոցացման համաձայնագրի բանակցությունների շրջանակներում տնտեսական, ոլորտային եւ ֆինանսական համագործակցության խմբում բանակցվել եւ ժամանակավորապես փակվել են ապագա համաձայնագրի 18 գլուխ:**

**Միեւնույն ժամանակ, սեպտեմբերի 19-ին Բրյուսելում, ըստ ԵՄ կայքէջի, Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ հանդիպումից հետո համատեղ ասուլիսում ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հայտարարել է, որ Եվրոհանձնաժողովն արդեն հաստատել է Հայաստանի հետ վիզային ռեժիմի դյուրացման ու ռեադմիսիայի պայմանագրի առնչությամբ բանակցությունները սկսելու որոշումը:**

**Ֆյուլեի խոսքերով, վիզային ռեժիմի դյուրացումը կարեւոր քայլ է, ըստ որում, վիզային ռեժիմի դյուրացումը ենթադրում է վիզայի ստացման համար ներկայացվող փաստաթղթերի պարզեցում, բազմակի մուտքի վիզաների ստացման հնարավորություն առավել երկար ժամանահատվածի համար, որոշ խմբերի մարդկանց համար վիզայի ստացման վճարների պակասեցում եւ այլն:**

Ա. Հ.

# Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ռուսաստանի դրոշները՝ կողք կողքի

Facebook սոցիալական ցանցում մի խումբ օգտագործողներ Հայաստանի անկախության օրը՝ սեպտեմբերի 21-ին, բողոքի քայլերթ են կազմակերպելու՝ բողոքելով «Հայաստանի անկախության տոնին օտար զորախմբերի եւ դրոշների դեմ»: Նրանք նշել են, որ քայլերթն սկսվելու է ժամը 09.00-ին Սարյանի պուրակից, իսկ մնացած հարցերը՝ երթուղին, հագուստը, պաստառները դեռ ճշտվում են: Հիշեցնենք, որ Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձին նվիրված ռազմական շքերթին, սեպտեմբերի 21-ին, մասնակցելու են նաեւ ռուսական 102-րդ ռազմակայանի ստորաբաժանումները: Հարցին, թե ո՞րն է դրա խորհուրդը, որ Հայաստանի անկախության զորահանդեսին մասնակցում են ռուսական զորքեր, Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար **Դավիթ Կարապետյանը** news.am-ին պատասխանել էր. «Հայաստանում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանը մասնակցում է Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանը: Կարծում եմ՝ մեր հասարակության համար գաղտնիք չեն պաշտպանության ոլորտում հայ-ռուսական համագործակցության խոր հիմքերը, իսկ զորահանդեսին Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանումների կողքին 102-րդ ռազմակայանի զինծառայողների մասնակցությունը պետք չէ շահարկել»:

Շահարկելը ու մանավանդ ռուսական զորախմբի դեմ բողոքի ակցիաները՝ մի կողմ. փորձենք հասկանալ բոլորովին այլ բան: Հայաստանում տեղակայված ռուսական ռազմակայանը ՀՀ անկախության քսաներորդ տարեդարձի զորահանդեսին մասնակցելու է Ռուսաստանի պետական դրոշով: Իր պետական դրոշով նույն զորահանդեսին մասնակցելու է Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետության զորախումբը: Այլ կերպ ասենք՝ ռուսական դրոշն ու ԼՂՀ դրոշը՝ միեւնույն զորահանդեսում են: Կապը, խորհուրդը, իմաստը, նշանակությունը հասկանալի են դառնում, այնպես չէ՞: Ավելին՝ նախատեսվում է ՀՀ անկախության զորահանդեսին ՀԱՊԿ արագ արձագանքման զորախմբի մասնակցությունը: Ի դեպ, նրանք, որոնց հենց ուղղված է այս ազդակը, թերեւս, արդեն հասկացել են. երեկ ադրբեջանական մի շարք կայքեր ընդգծում էին՝ «Ռուսաստանի, Հայաստանի եւ ԼՂՀ պետական դրոշները՝ միեւնույն զորահանդեսում», իհարկե՝ ԼՂՀ-ն չակերտների մեջ առած. թերեւս ազդակը մինչեւ վերջ հասկացած չլինելու պատճառով:

Ինչ վերաբերում է «օտար երկրին, օտար դրոշին ու զորախմբին», ապա հիշեցնենք՝ Ռուսաստանը մեր թերեւս միակ ռազմաքաղաքական դաշնակիցն է, ավելին՝ քսանամյա Հայաստանի Հանրապետությունը միակ հարավկովկասյան երկիրն է, որը անդամակցում է ռազմաքաղաքական միավորման՝ ի դեմս ՀԱՊԿ-ի. սա ձեռքբերո՞ւմ է, անշուշտ, ուրեմն՝ բողոքել ռուսական, ՀԱՊԿ զորախմբերի ու նրանց դրոշների դեմ Հայաստանում, նույնն է, թե ՆԱՏՕ-ի անդամ Նորվեգիան բողոքի, որ իր անկախության զորահանդեսին (եթե, իհարկե, Նորվեգիան այն անցկացնի երբեւէ) ծածանվում են ՆԱՏՕ-ի պետությունների դրոշներն ու քայլում են այդ պետությունների զորախմբերի՝ նորվեգականի կողքին:

Հ. ԱՓՅԱՆ

# Օգոստոսին տնտեսական ակտիվության աճը՝ 9,6 տոկոս

## *Հիմնականում արդյունաբերության եւ գյուղատնտեսության շնորհիվ*

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակած 2011-ի օգոստոսու ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա օգոստոսի համեմատ գրանցել է 9,6 տոկոս աճ: Հուլիսի նկատմամբ օգոստոսին արձանագրված աճը պատկառելի է եղել՝ 21,3 տոկոս: Հիշեցնենք, որ սկսած այս տարվանից, Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը:**

**Տնտեսության ճյուղերից արդյունաբերությունը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է 12,5 տոկոս, իսկ հուլիսի նկատմամբ՝ 7,8 տոկոսով: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է 21,3 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 61,9 տոկոսով: Շինարարությունը օգոստոսին արձանագրել է 24,7 տոկոս անկում, իսկ այս տարվա հուլիսի համեմատ աճել է 16,3 տոկոսով:**

**Մանրածախ առեւտրում արձանագրվել է 6,9 տոկոս աճ անցյալ տարվա օգոստոսի համեմատ, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 8,7 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա օգոստոսի նկատմամբ աճը կազմել է 4,2 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 0,4 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 7,9 տոկոսով, իսկ հուլիսի նկատմամբ նվազել 0,6 տոկոսով:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի օգոստոսին 2010-ի օգոստոսի նկատմամբ ավելացել է 25,1 տոկոսով եւ կազմել 513 մլն դոլար: Արտահանումը կազմել է 117,3 մլն դոլար, արձանագրելով 30,6 տոկոս աճ, իսկ օգոստոսին հուլիսի նկատմամբ՝ 10,4 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 395,8 մլն դոլար, նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճելով 23,5 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ 31,2 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը, ի տարբերություն նախորդող ամիսների, օգոստոսին խորացել է եւ կազմել 278,5 մլն դոլար:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում օգոստոսին կազմել է 110 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 137 հազար դրամ, պետականում՝ 87 հազար դրամ:**

**Այսպիսով, օգոստոսին տնտեսական ակտիվության աճը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսության իրական հատվածի՝ արդյունաբերության եւ գյուղատնտեսական արտադրանքի աճով: Շինարարությունը շարունակում է անկում արձանագրել: Սակայն, ընդհանրապես, տնտեսապես ոչ աշխույժ համարվող այդ ամսվա համար 9,6 տոկոս աճը լավ ցուցանիշ է:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Սարդարապատից

# Հայաստանը «զորացրվում է բանակից»

Ավագյանների ընտանիքը անհամբեր սպասում է որդու՝ Գուրգենի զորացրմանը: Գուրգենը ընտանիքի միակ արու զավակն է, քույրն ապրում է Ռուսաստանում՝ ընտանիքով, այնտեղ են կանչել նաեւ հորը՝ աշխատելու: Այսինքն Ավագյանների ընտանիքից միայն Գուրգենի մայրն է անհամբեր սպասում 20-ամյա որդու վերադարձին...:

Ճիշտ Գուրգենի տարիքին է Հայաստանի երրորդ Հանրապետությունը կամ, ավելի ճիշտ, Գուրգենն է Հայաստանի Հանրապետության տարիքին. ինչպես հիմա շատ է նշվում՝ անկախության սերնդի ներկայացուցիչն է: Եվ ինչպես բանակից զորակոչված 20-ամյա տղաներն են վերադառնալով լծվում (սովորաբար) խաղաղ աշխատանքի, այնպես էլ՝ 20-ամյա Հայաստանը:

Սեպտեմբերի 14-ին անկախության 20-րդ տարեդարձի առիթով Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել էր տոնական ընդունելություն՝ ՀՀ արդարադատության համակարգի, ուժային կառույցների ներկայացուցիչների եւ դիվանագետների մասնակցությամբ: Ինչպես իր խոսքում նշեց նախագահը՝ «Սա հրաշալի տոն է: Սա նաեւ մեր քսանամյա ուղին, մեր անելիքներն ու ապագայի պատկերացումները վերաիմաստավորելու լրջագույն առիթ է»: Անշուշտ՝ անկախությունը հրաշալի տոն է, եւ իհարկե՝ մեր քսանամյա ուղին, մեր անելիքներն ու ապագայի պատկերացումները վերաիմաստավորելու լրջագույն առիթ է, ուրեմն՝ փորձենք վերաիմաստավորել:

Սարդարապատում նախագահը այնուհետեւ ընդգծում էր. «Ավելի քան երեք միլիոն հայաստանցիների հայրենիքն է ազատ եւ անկախ Հայաստանը: Միլիոնավոր աշխարհասփյուռ հայերի հայրենիքը: Տունը, որտեղ ապրելու եւ երջանկության իրենց բաժինն են վայելելու մեր զավակները»: Սակայն արդյո՞ք «ավելի քան երեք միլիոն հայաստանցիները» իրենց հայրենիքն են համարում ազատ ու անկախ Հայաստանը: Մի՞թե այդ նույն հայաստանցիներն են, որ շաբաթվա մի քանի օր հերթ են կանգնում Ռուսաստան մեկնող ավտոբուսների առջեւ՝ ընտանիքներով, արդյո՞ք այդ նույն հայաստանցիներն են նաեւ՝ ավիատոմսերի վաճառքի կետերի սեփականատերերը իրենց՝ «կարգին եկամտաբեր բիզնես է Հայաստանում» խոսքերով, եւ մի՞թե հենց այդ նույն՝ Ռուսաստան՝ անկողիններով մեկնող հայաստանցիների զավակներն են նաեւ վայելելու իրենց բաժին երջանկությունը «Հայաստան-տանը», եւ վերջապես, արդյո՞ք միլիոնավոր աշխարհասփյուռ հայերի մեջ են մտնում նաեւ նրանք, որոնք հայերեն չեն խոսում, եւ նրանց զավակները, որոնք հայերեն նաեւ չեն հասկանում: Ու ամենակարեւորը՝ երբ նախագահի վերոհիշյալ խոսքին ավելացնենք «պետք է» բառը, կարծես թե ամեն ինչ կդառնա առավել իրական. այո՝ պետք է որ ավելի քան երեք միլիոն հայաստանցիների հայրենիքը լինի ազատ ու անկախ Հաաստանը եւ միլիոնավոր աշխարհասփյուռ հայերի հայրենիքը, եւ այո՝ պետք է լինի այն տունը, որտեղ ապրելու եւ երջանկության իրենց բաժինն են վայելելու մեր զավակները:

Այնուհետեւ նախագահը նշեց. «Մենք մեր անկախությունը վաստակել ենք աշխարհին ու ինքներս մեզ ապացուցելով, որ մեր հողի վրա իրավունք ունենք ապրելու՝ մեր կերպով ու մեր արժեքներով: Ապացուցել ենք առաջին հերթին մեր բանակի հաղթանակներով: Բանակ, որը ծնվեց մարտի դաշտում ու պատերազմի հնոցում դարձավ մեր նորանկախ պետականության կուռ վահանը եւ անխախտ հենասյունը»: Եվ հիմա, ոչ ոք թերեւս չի վիճարկի, որ մեր կերպով ու մեր արժեքով ապրելու մեր իրավունքը մենք ապացուցել ենք պարտադրված պատերազմի ծնունդ բանակի հաղթանակներով: Սակայն արդյո՞ք այսօր մենք ապրում ենք մեր կերպով ու մեր արժեքով, եթե այո, ապա մերոնցից չե՞ն միթե տարբեր կրոնական կազմակերպությունները ու զանազան «փոքրամասնությունները», ժամանակին՝ կամավոր բանակից այսօր խուսափող ռուսաստանա-եվրոպա-ամերիկաբնակ հայաստանցի «ջահելները»:

Շարունակելով՝ նախագահը ընդգծում էր. «Եվ հզորանալով ու ամրանալով՝ հայոց բանակն այսօր ոչ միայն ապավենն է հայաստանցու անվտանգ ու ստեղծագործ կյանքի, այլեւ խաղաղության ու




կայունության մշտարթուն երաշխավորն է մեր տարածաշրջանում: Նա պատրաստ է խոյանալու Հայաստանի անկախության յուրաքանչյուր սպառնալիքի դեմ...այսպիսին է մեր բանակն այսօր»: Անշուշտ, հայոց բանակն այսօր ապավենն է հայաստանցու անվտանգ ու ստեղծագործ կյանքի: Որեւէ մեկս չենք էլ կարող պատկերացնել իրավիճակը, երբ մենք նման աշխարհագրությամբ լինեինք առանց նման բանակի, որն, այո, երբեք պատերազմ չսկսելու հավաստիացմամբ՝ նաեւ խաղաղության երաշխավորն է մեր տարածաշրջանում, պատրաստ՝ «խոյանալու Հայաստանի անկախության յուրաքանչյուր սպառնալիքի դեմ». իսկապես՝ «Այսպիսին է մեր բանակն այսօր»:

Անդրադառնալով վերջին ժամանակներում մասսայական բարձրաձայնման առարկա դարձած զինվորական կարգապահության թեմային՝ նախագահը շեշտում է. «Պետական մտածողություն ունեցող, կրթված ու կարգապահ զինվորը եւ նրա ոգին են մեր բանակի մարտունակության գրավականը», այս առիթով նախագահը հիշեցնում է նաեւ ազգային հերոս Մոնթեի խոսքը. «Զինվորը զինվոր է, երբ ունի պետական մտածողություն»: Ունի՞ այսօրվա հայ զինվորն ընդհանուր առմամբ պետական մտածողություն, ոչ, հետեւաբար՝ ակնհայտ չէ՞ բանակում կարգապահական խնդիրների հիմքը...: Ընդ որում, զինվորը միայն ժամկետային պարտադիր զինծառայողը չէ, զինվորը նաեւ սպան է՝ լեյտենանտից մինչեւ գեներալ: Ու ամենեւին պատահական չէ նախագահը ընդգծում. «Ամենից առաջ ու ամենից ավելի պիտի զինվորին ու որդուն բանակ ճանապարհող մորը զինենք բանակի ու նրա հրամանատարների հանդեպ վստահությամբ»: Սերժ Սարգսյանը հիշեցնում է Նժդեհին՝ «Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը»:

...Ավագյան Գուրգենի մայրը մեր զրույցում խոստովանեց. «Ինչպե՞ս թե ինչ պետք է անի տղաս վերադառնալով, կգնա հոր ու քրոջ մոտ՝ Ռուսաստան, ես էլ կգնամ, մնանք՝ ի՞նչ անենք»...:

Թերեւս գիտակցելով, որ բանակում առկա են խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն, անշուշտ, հնարավոր է լուծել, նախագահը իր խոսքում նշում է. «Մեր մարտունակությունը պիտի գնահատենք ու զորացնենք ոչ միայն տարածաշրջանի, այլեւ բանակների այսօրվա, մեր իսկ բանակի երեկվա համեմատությամբ: Հետեւողական աշխատանքով: Ամեն օր, քայլ առ քայլ ամրացնելու ենք այն լարերը, որոնք բանակը կապում են քաղաքացիական հասարակության հետ. զինվորին դարձնում քաղաքացի եւ քաղաքացուն՝ զինվոր: Միաժամանակ, սակայն, պետք է անխնա կտրատենք այն վնասակար թելերը, որոնք ոչ թե ամրացնում, այլ թուլացնում են բանակը, որոնք զինվորին ու սպային խճճում են կենցաղային ու տնտեսական խնդիրների հորձանուտում»: Ո՞վ է հիշում մեր բանակը՝ մանավանդ նյութատեխնիկական մասով՝ 90-ականներին, ո՞վ կհամարձակվի հիշել նաեւ սովետական «ժառանգություն» «դեդովշինայի» առկայության չափը մեր բանակում 90-ականներին ու այժմ... սակայն, անշուշտ, սա դեռ ճանապարհի սկիզբն է՝ հետեւողական աշխատանքի սկիզբը: Ընդգծելով, որ՝ «մենք պատրաստ ենք հաղթելու: Բայց կամենում ենք հաղթել միայն մտքով ու աշխատանքով», նախագահ Սարգսյանը նշում է. «Զինվորի կյանքն ու անվտանգությունը մեծապես կախված են նաեւ մեր դիվանագետների հաջող գործունեությունից: Հազարավոր զինվորներ ապահով իրենց ընտանիքների գիրկն են վերադարձել հենց մեր դիվանագետների շատ ու շատ անքուն գիշերների քրտնաջան աշխատանքի արդյունքում»: Եվ ինչո՞ւ ենք մենք «ամաչում» այս փաստը գիտակցելուց ու բարձրաձայնելուց. այո, հենց բանակից եկած հարյուրավոր զոհվածների ցավալի համայնապատկերում, հազարավորները խաղաղ ու ապահով վերադարձել են հենց մեր դիվանագիտության շնորհիվ: Ամո՞թ է այս խոստովանությունը, ամո՞թ է գիտակցելն ու բարձրաձայնելը, որ հայ-ադրբեջանական նոր պատերազմի գլխավոր խոչընդոտն այսօր Հայաստանն է, այլ կերպ՝ հայ դիվանագիտությունը:

Ապագայի հույս-վստահությամբ է ավարտվում նախագահի ելույթը Սարդարապատում. «Գալիք սերունդներին թողնելու ենք ամուր պետականության հիմքեր ու ժողովրդավարության հենասյուներ... թողնելու ենք նաեւ իրավական պետություն-տանիք»: Ընդգծելով, որ հայ ժողովուրդը տասնյակ ու հարյուրավոր տարիներ ապրել է օտարի ու օտար օրենքներով՝ նախագահը մատնանշում է անկախության «աննախադեպ ու անձեռակերտ» նվաճումը. «Այդ նվաճումը ՀՀ քաղաքացին է: Հայաստանցին, որը ոչ միայն վայելում է սեփական օրենքներով ապրելու իրավունքը, այլեւ հենց ինքն էլ ստեղծում ու ընդունում է այդ օրենքները, գծում իր իրավունքի սահմանները»: Եվ կրկին՝ պետք է...Պետք է հայաստանցին ինքը ստեղծի ու ընդունի այդ օրենքները, գծի իր իրավունքի սահմանները, միայն այդ պարագայում՝ հայաստանցին կդառնա անկախության մեր «աննախադեպ ու անձեռակերտ» նվաճումը:

«Հայաստանը դու ես»՝ նախագահ Սարգսյանի խոսքերով մեր յուրաքանչյուր հայրենակից վաստակել է այդ իրավունքը. «Հայաստանը նաեւ դու ես, երբ Սիրիայում մեսրոպյան այբուբեն ես հնչեցնում, երբ Ֆրանսիայում ցույցի ես ելնում, երբ Ամերիկայից գալիս ես Արցախին պաշտպան կանգնելու, երբ Ռուսաստանի հեռավոր քաղաքում հայկական կիրակնօրյա դպրոց ես բացում: Հայաստանը դու ես, երբ հայրենադարձվում ես եւ հպարտանում, որ քո զավակները Երեւանի բակում խաղում են որպես տանտեր եւ ՀՀ քաղաքացի են՝ այսօր եւ մեկընդմիշտ: Աշխարհում շատերը հայի եւ Հայաստանի մասին պատկերացումը ձեւավորում են՝ նկատի ունենալով քո անձնական նկարագիրը, ճանաչելով քեզ. ուրեմն Հայաստանը դու ես»: Անվիճարկելի խոսքեր, սակայն. արդյո՞ք Հայաստանը նա է, որը Դուբայում հայ օրիորդներ է ընդունում՝ արաբին կամ թուրքին վաճառելու համար, մի՞թե Հայաստանը նա է, որը Ռուսաստանում մի կնոջը փոխում է մի այլ կնոջով՝ պարզապես ՌԴ քաղաքացի դառնալու ու «մի քիչ փող կպցնելու համար», արդյո՞ք նա է Հայաստանը, որը Ֆրանսիայում չի խոսում ու չի հասկանում հայերենը ու չի էլ ուզում խոսել կամ հասկանալ... եւ ամենակարեւորը՝ մի՞թե Հայաստանի եւ հայի մասին պատկերացումը նաեւ վերոհիշյալներով չեն ձեւավորում կամ ամբողջացնում...:

...Մեր հարեւան Գուրգեն Ավագյանը վերադարձել է բանակից նախօրեին, երեկ առավոտյան՝ աշխատանքի գնալիս, տեսա նրան: Պարզեցի, որ գնում է «մի քիչ տժժալու, դե բանակից եմ եկել, ապեր: Մի երկու օրից էլ իմ ու մամայի համար տոմս կառնեմ՝ գնանք Ռուսաստան»: Հիմա՝ Հայաստանը նաեւ Գուրգե՞նն է...

Մնում է միայն կիսել նախագահի վստահությունը. «Քանի դեռ Աստված փակ է պահում ապագայի վարագույրը, գալիք հազարամյակների վստահ սպասումով բարձրաձայնում ենք. կեցցե Հայաստանի Հանրապետությունը, կեցցե անկախ երկրի ազատ քաղաքացին»:

Ուրեմն շնորհավոր «զորացրումդ», Հայաստան, մեծ հույս ունենք, որ քո հետագա ճանապարհը «տժժալն» ու ռուսաստանները չեն լինելու, այլ՝ քո անկախ պետության, ազատ քաղաքացին, մենք. ու Հայաստանն էլ մենք ենք:

ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

## Իրավաբանության եւ հոգեբանության խաչմերուկներում

**Իրավաբանության եւ հոգեբանության կապը շատ սերտ եւ արդիական է ժամանակակից աշխարհում: Այդ խնդիրները քննարկվում են հատկապես գիտական եւ փորձագիտական շրջանակներում: Ինչպես տեղեկացնում է www.plcarm2011.com կայքը, նոյեմբերի 4-6-ը Երեւանում տեղի է ունենալու «Հոգեբանության եւ իրավունքի խաչմերուկները» խորագրով գիտաժողով, որի նպատակն է քննարկել հոգեբանության եւ իրավունքի փոխկապվածության հիմնախնդիրները իրավաբանական, սոցիալական, տարիքային եւ մանկավարժական հոգեբանության, իրավունքի, քրեաբանության, սոցիոլոգիայի եւ այլ գիտակարգերի համատեքստում: Գիտաժողովի ընթացքում նախատեսվում է մշակել հոգեբանության եւ իրավունքի տարբեր բնագավառների միջեւ արդյունավետ համագործակցության հայեցակարգ, դիտարկել հոգեբանության հիմնահարցերը հասարակական եւ իրավական ինստիտուտների համակարգում:**

**Գիտաժողովի առջեւ դրված խնդիրներից են՝ ակտիվացնել համագործակցությունը հայաստանյան եւ արտասահմանյան հոգեբանների եւ իրավաբանների միջեւ, հանդես գալ տեսության եւ պրակտիկայի առաջավոր փորձի փոխանակմամբ, նախանշել հոգեբանության եւ իրավունքի համագործակցության տեսական եւ կիրառական հիմնախնդիրները, գտնել լուծման ուղիները, ներկայացնել հոգեբանության եւ իրավաբանության համագործակցության ու երկխոսության շրջանակները ՀՀ եւ արտասահմանյան տարբեր երկրների իրավապահ օղակներում եւ կրթական հաստատություններում, քննարկել կրթական հաստատությունների գործունեությունը՝ կապված երեխաների ու երիտասարդների իրավական դաստիարակության ու իրավական գիտակցության զարգացման հետ եւ այլն:**

**Կայքից նաեւ տեղեկանում ենք, որ գիտաժողովին աջակցում են ԱՄՆ պետքարտուղարությունը, Հոգեբանների եւ իրավաբանների եվրոպական ասոցիացիան, Մեծ Բրիտանիայի Քեմբրիջի համալսարանի քրեաբանության ինստիտուտը, ՀՀ Փորձաքննությունների ազգային բյուրոն, Ակադեմիական համագործակցության եւ օժանդակության հայկական ասոցիացիան եւ այլ կազմակերպություններ:**

**Գիտաժողովի ընթացքում կլինեն հրավիրված պրոֆեսորների հատուկ ելույթներ, թեմատիկ քննարկումներ՝ նվիրված հոգեբանության եւ իրավունքի ոլորտների աշխատակիցների համագործակցության եւ երկխոսության հեռանկարներին:**

**Գիտաժողովի ընթացքում կկազմակերպվեն 2 թրեյնինգներ՝ «Միջազգային ակադեմիական գրագրության հիմունքները» եւ «Միջազգային հեղինակավոր պարբերականներում հոդվածներ հրատարակելու ուղեցույց», որոնց ընթացքում հնարավոր է ծանոթանալ միջազգային հեղինակավոր ամսագրերում հոդվածներ տպագրելու հմտություններին եւ ակադեմիական գրագրության կուլտուրային:**

**Նախատեսվում են աշխատանքներ հետեւյալ հիմնահարցերի շուրջը. սոցիալական վարքի իրավական ասպեկտները, հոգեբանության եւ իրավունքի հատման կետերը, քրեաբանությունը եւ հանցավորության կանխարգելումը, իրավական համակարգի եւ մարդու իրավունքների հոգեսոցիալական հիմքերը, իրավաբանական հոգեբանության զարգացումը Հայաստանում:**

ՍՈՍԵ ՄԱՅԻԼՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի

ԱԶԳ

# Միջազգային

## Վարչապետ Էրդողանը Նյու Յորքում է

### *ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում նա զորավիգ կկանգնի Պաղեստինի անկախությանը*

Երեկ Թուրքիայի վարչապետ Էրդողանը Նյու Յորքում էր: Նա այնտեղ կմասնակցի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանին: Նրա առաջնահերթ խնդիրը պաղեստինցիների անկախ պետականության ճանաչման նախաձեռնությանը զորավիգ կանգնելն է, որն առայժմ դրսեւորվում է ՄԱԿ-ին Պաղեստինի անդամակցության ձեւով:

Թե ինչպես կանդրադառնա ՄԱԿ-ին Պաղեստինի անդամակցությանը Էրդողանի աջակցությունը, ցույց կտա ժամանակը: Բայց որ ԱՄՆ-ն, համարելով անդամակցությունը կործանարար պաղեստինցիների եւ արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար, արդեն հայտարարել է ՄԱԿ-ին անդամակցելու պաղեստինցիների դիմումը վետոյի ենթարկելու մասին, որին միացել է նաեւ Եվրոմիությունը, ակնհայտ է:

Մինչդեռ, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նախորդ նստաշրջանում նախագահ Օբաման ամբիոնից ի լուր աշխարհի հայտարարել է. «Հաջորդ տարի այստեղ ներկաների մեջ կտեսնենք նաեւ Պաղեստինի պետությանը»: Նյու Յորք ուղեւորվելուց առաջ Անկարայի օդանավակայանում վարչապետ Էրդողանը լրագրողներին հիշեցնելով այդ մասին, ասաց. «Անցյալ տարի Օբաման Պաղեստինին ՄԱԿ-ում տեսնելու մասին էր արտահայտվում, ես անձամբ դժվարանում եմ հասկանալ նրա ներկա դիրքորոշումը: Եթե նրանք, ովքեր խոսք են տվել ՄԱԿ-ի ամբիոնից եւ իրենց խոսքի տերը լինեն, ապա արդյունքը ապահոված կլինի՝ ինչն էլ լրջորեն անհանգստացնում է Իսրայելին, հետեւաբար՝ ԱՄՆ-ին: Սակայն ես այդ հարցում լավատես եմ, նախագահ Օբամային եմ ներկայացնելու նրա ելույթի սղագրությունը»:

Բացի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում ելույթից, վարչապետ Էրդողանը նստաշրջանի ընթացքում երկկողմ հանդիպումներ կունենա ավելի քան 30 երկրների ղեկավարների, այդ թվում՝ նախագահ Օբամայի հետ, որը նախապես, ըստ թուրքական լրատվամիջոցների, ծրագրված է շուրջ 2 ժամ:

Օբամա-Էրդողան հանդիպմանը կքննարկվեն ՄԱԿ-ին Պաղեստինի անդամակցությանը, թուրք իսրայելական տարաձայնություններին, Մալաթիայում տեղակայվող հակահրթիռային համակարգին, Սիրիայում տիրող իրավիճակին, PKK-ի ահաբեկչության դեմ համատեղ պայքարին առնչվող խնդիրներ: Ի դեպ, հիշելով այդ մասին, թուրքական հանրային հեռուստատեսությունը տեղեկացրեց, որ Էրդողանի հետ հանդիպումից հետո նախագահ Օբաման կընդունի Իսրայելի վարչապետ Նաթանյահուին:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

## «Սիրիայի հարցում Թուրքիան պետք է պատասխանատվություն դրսեւորի, այլ ոչ թե դիմի սադրանքի»

Սիրիայի սահմանակից Թուրքիան, մոռանալով առկա խնդիրները բոլոր հարեւանների հետ «զրոյական» մակարդակի իջեցնելու դիրքորոշման մասին, ընդգծված թշնամական քաղաքականություն է վարում նախագահ Բաշար Ասադի վարչակարգի նկատմամբ: Թերեւս դրանում իր դերն ունի տարածաշրջանային գերտերության թուրքական հավակնությունները, գուցե նաեւ պաշտոնական Վաշինգտոնի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները, այնուամենայնիվ, Թուրքիայի հակասիրիական նկրտումները ոչ միայն չեն նպաստում երկրի կայունացմանը, այլեւ պատճառ են դառնում, որ զուգահեռաբար սրվի նաեւ նրա հարաբերությունները Սիրիայի ռազմավարական դաշնակից Իրանի իսլամական հանրապետության հետ:

Թերեւս այդ առումով պատահական չէր Իրանի Իսլամական Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հայտարարությունը: Նա, թուրքական մամուլի վկայությամբ, խստորեն նախազգուշացրել է, ասելով. «Թուրքիան հարեւան երկիր է եւ մեր դաշնակիցը, սակայն երբ տարածաշրջանը ականատես է լինում հեղաշրջումների, բոլորս պետք է գործենք պատասխանատվությամբ: Սիրիայի հարցում Թուրքիայից պահանջվում է պատասխանատու վերաբերմունք, այլ ոչ թե սադրանքի դրսեւորում»:

Հ. Չ.

## Եմենում բախումները վերսկսվել են. կան տասնյակ զոհեր



Երեքշաբթի առավոտյան Եմենի մայրաքաղաք Սանայում անվտանգության ուժերը արկակոծել են ընդդիմադիր ուժերի ճամբարը: Կան զոհեր եւ վիրավորներ: Ֆրանսպրեսի տվյալներով, վերջին երկու օրերին բախումների ընթացքում սպանվել են 50 եւ վիրավորվել 1000-ից ավելի մարդիկ: Հիվանդանոցները չեն կարողանում ընդունել բոլոր վիրավորներին: Ընդդիմության ուժերի կողմում են այլախոհ գեներալ Ալի Մոհսեն ալ Ահմարի զինվորները:

Ցուցարարները պահանջում են 1978-ից իշխող նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի հրաժարականը՝ նրան մեղադրելով հովանավորչության եւ կաշառակերության մեջ: Բողոքի ելույթները սկսվել են այս տարվա հունվարին: Հունիսի 3-ի մահափորձից վիրավորված Սալեհը մինչեւ օրս բուժվում է Սաուդյան Արաբիայում: Մեկ շաբաթ առաջ նա Եմենի փոխնախագահին հանձնարարեց ընդդիմության հետ բանակցել իշխանափոխության շուրջը, որը պետք է իրականացվի Պարսից ծոցի միապետների մշակած ծրագրին համապատասխան: «Ֆիգարո» թերթը հաղորդում է, որ սեպտեմբերի 19-ին միապետների բանագնաց Աբդելլաթիֆ ալ Զայանին եւ ՄԱԿ-ի պատվիրակ Ջամալ Բենոմարը Սանա են ժամանել հակամարտ կողմերի հաշտեցման նպատակով: Սակայն երեքշաբթի օրը նախագահ Սալեհի կողմնակիցների սանձազերծած մարտերը քաղաքացիական պատերազմի լուրջ վտանգ են ստեղծում:

Ենթադրվում է, որ կառավարական զորքի ներկայիս գործողությունների նպատակն է ճնշում գործադրել հակառակորդների եւ մասնավորապես գեներալ ալ Ահմարի գերդաստանի վրա: Պ. Ք.

## Աբբասը համաձայն է հանդիպել Նաթանյահուի հետ

Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը ընդունել է Նյու Յորքում այս շաբաթ հանդիպում ունենալու Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի առաջարկը: Այդ մասին Աբբասն ասել է Fox News հեռուստաալիքին տված հարցազրույցում, միաժամանակ նշելով, որ բանակցությունը վերսկսելու մեջ ինքն առանձնակի իմաստ չի տեսնում:

Աբբասը պահանջել է 1967-ի սահմանների վերականգնում: Նրա խոսքերով՝ հաշտության բանակցությունների դադարեցման պատճառը ավանների կառուցումը սառեցնելուց Իսրայելի հրաժարումն է:

Աբբասը հիշեցրել է, որ ԱՄՆ-ը խոստացել էր Պաղեստինի պետություն ստեղծել մինչեւ 2011-ի սեպտեմբեր:

Ավելի վաղ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի հետ հանդիպման ժամանակ Մահմուդ Աբբասը հաստատել էր Պաղեստինի պետության ճանաչման պահանջով ՄԱԿ-ի ԱԽ-ին դիմելու իր մտադրությունը:

ՀԱԿԻՐՃ

## Իսրայելը ռազմաբազա է պահանջում Հունաստանից

Երեկ այդ մասին նշել է «Դունիա Բյուլթեն» կայքէջը, պայմանավորելով այս պահանջը թուրք իսրայելական հարաբերությունների լարվածության սրմամբ: Ըստ թուրքական կայքէջի, Իսրայելի պահանջը որպես կանխարգելիչ միջոց, պատճառաբանվել է Կիպրոսի ջրերում ամերիկյան «Նոբլ» ընկերության հետ բնական գազի համատեղ հորատման աշխատանքների ընթացքը իսրայելական օդուժի միջոցով Թուրքիայի հնարավոր ագրեսիայից պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Այլ կերպ՝ Հունաստանից պահանջվող ռազմաբազան պետք է որպես հենակետ ծառայի իսրայելական ռազմական օդանավերի համար: Հունական «Կաթիմերինի» թերթի վկայությամբ, Իսրայելի հետ Աթենքի այս ռազմավարական մերձեցումը խիստ մտահոգել է Թուրքիային, որի հետեւանքով Անկարան հարկ է համարել նախազգուշացնելու Հունաստանին: Հ. Չ.

## Կիպրոսը ծովում գազի հանքավայրի հորատումն սկսել է

### *Թուրքիան սպառնում է ռազմանավեր ուղարկել*

Կիպրոսի Հանրապետությունը կղզուց հարավ՝ Միջերկրական ծովի ծանծաղուտում գազի հանքավայրի փորձնական հորատում է սկսել, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Հանրապետության կառավարությունը չի հրաժարվում տվյալ տարածքի երկրաբանական հետախուզումը շարունակելու նախնական որոշումից՝ չնայած Թուրքիան դա համարում է անօրինական:

Կղզու կառավարությունից գազարդյունահանման թույլտվություն ստացած ամերիկյան Noble Energy ընկերությունը արդեն 80 մետր խորությամբ հորանցք է փորել:

Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, Անկարան պահանջել էր դադարեցնել շրջանի երկրախուզությունը, սպառնալով հակառակ դեպքում ռազմանավեր ուղարկել սեփական երկրախուզական նավերին ուղեկցելու համար:

Թուրքիան 1974 թ. կղզի ներխուժելուց ի վեր չի ճանաչում ՄԱԿ-ի լիիրավ անդամ Կիպրոսի Հանրապետությանը: Անկարան կղզում միակ օրինական իշխանություն է համարում Հյուսիսային Կիպրոսը, որին մինչեւ օրս ոչ մի պետություն չի ճանաչել, բացի Թուրքիայից:

2012-ին Կիպրոսի Հանրապետությունը նախագահելու է Եվրոմիությունում: Անկարան սպառնում է այդ պատրվակով լիովին «սառեցնել» հարաբերությունները Եվրոմիության հետ:

## Հունաստանը հանրաքվեի չի դնի եվրոգոտուց դուրս գալու հարցը



Հունաստանի կառավարությունը մտադիր չէ հանրաքվեի դնել եվրոգոտուց երկրի դուրս գալու հարցը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով կառավարության մամլո ծառայության ներկայացուցիչ Անգելոս Տոլկասին: Ավելի վաղ՝ սեպտեմբերի 13-ին, հունական «Կաթիմերինի» թերթը գրել էր, թե կառավարության պաշտոնյաները քննարկում են հանրաքվեի թեման:

Տոլկասի խոսքերով՝ կառավարությունը վաղուց է քննարկում քաղաքական բարեփոխումներին նվիրված հանրաքվեի անցկացման հնարավորությունը, սակայն պաշտոնյաները չեն բարձրացրել արժույթի հարցը: Թերթը գրել էր, թե վարչապետ Գեորգիոս Պապանդրեուին վաղուց առաջարկել էին եվրոյի հետ կապված հանրաքվե անցկացնել, բայց նա հրաժարվել էր: Սակայն սեպտեմբերի կեսերին նա իբր որոշել էր քննության առնել այդ հնարավորությունը:

Վերջին ամիսներին Հունաստանը դեֆոլտի շեմին է: Եվրոհանձնաժողովը եւ ԱՄՀ-ն արդեն քանիցս Հունաստանին օգնել են արտոնյալ վարկերով, բայց դրանք անբավարար են: Երկրի պարտքն այնքան մեծ է, որ նահանջ ապրող տնտեսությունն անկարող է սպասարկել վարկերը: Բյուջեի պակասորդի կրճատմանն ուղղված կառավարական ծրագրերը եւս առայժմ չեն տվել սպասված արդյունքը:

Թե ինչ կպատահի եվրոյին, եթե Հունաստանն այնուամենայնիվ հայտարարի պարտքային պարտավորությունները կատարելու անկարողության մասին, առայժմ հայտնի չէ: Մինչեւ օրս եվրոգոտու ոչ մի երկիր իրեն սնանկ չի հայտարարել:

Հունաստանի պետական պարտքը մոտ 350 մլրդ եվրո է: ԵՄ-ը եւ ԱՄՀ-ն արդեն հատկացրել են 110 միլիարդ: Ներկայումս Աթենքը Եվրոհանձնաժողովի, Եվրոպայի ԿԲ-ի եւ ԱՄՀ-ի հետ բանակցում է եւս 8 մլրդ եվրո ստանալու նպատակով:

## OPEC-ը ճանաչեց Լիբիայի ԱԱԽ-ին

Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (OPEC) ճանաչել է Լիբիայի Անցումային ազգային խորհրդին (ԱԱԽ) որպես կազմակերպությունում այդ երկրի ներկայացուցչի: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը: Ավելի վաղ ՄԱԿ-ը Լիբիայի խնդրանքով ԱԱԽ-ին ճանաչել էր որպես միջազգային ընկերակցությունում Տրիպոլիի ներկայացուցչի:

Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Լիբիայի կենտրոնում գտնվող նավթի հանքավայրերում հանույթի նախապատերազմյան մակարդակը կվերականգնվի 15 ամիս հետո, մյուս շրջաններում՝ ավելի ուշ: Քաղաքացիական պատերազմից առաջ Լիբիան արդյունահանում էր օրական 1,6 մլն բարել նավթ, մինչդեռ այժմ արդյունահանման ծավալը չի անցնում 200 հազար բարելից:

Նավթային հատվածը լիբիացիների բյուջեի եկամտի գլխավոր աղբյուրն է: Նավթի վաճառքը կազմում է Լիբիայի ամբողջ արտահանության 95 տոկոսը:

Լիբիայից բացի, OPEC-ի մեջ մտնում են այնպիսի խոշոր նավթարդյունահանողներ, ինչպիսիք են Սաուդյան Արաբիան, Վենեսուելան, Ալժիրը, Իրանը եւ Քուվեյթը: OPEC-ն իրականացնում է համաշխարհային նավթահանույթի 40 տոկոսը:

# Բեռլինում Ադրբեջանի դեսպանությունը ստերի պատանդ է դարձնում ԳԴՀ արտգործնախարարությանը

«**Ազգի**» շաբաթ օրվա համարում տեղեկացրել էինք սեպտեմբերի 16-22-ը Շտուտգարտում ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված մշակութային շաբաթվա մասին: Ըստ ծրագրի, երկուշաբթի՝ սեպտեմբերի 19-ին նախատեսված էր Բեռլինում ԼՂՀ ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանի «20-ամյա անկախ Արցախ» վերնագրյալ դասախոսությունը, ինչին խոչընդոտելու ակտիվ աշխատանքին ամիսներ առաջ արդեն լծվել էր Բեռլինում Ադրբեջանի դեսպանությունը: Մեր հաղորդագրության մեջ նշել էինք, թե հայ համայնքի աջալրջության պայմաններում ադրբեջանական ջանքերն ապարդյուն են եղել: Այս վերջինը, սխալ չէ, իհարկե, բայց ճշգրտման կարիք ունի: Ադրբեջանի դեսպանությունը ձեռքերը ծալած չի նստել եւ շարունակել է իր քարոզչական աշխատանքը՝ տեղի եւ դրսի լրատվամիջոցները ողողելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությամբ, մեր պատկերացմամբ, միգուցե հույս ունենալով, թե թիկունքում ունի Շտուտգարտում հզոր հենարան՝ 2010-ից Գերմանիայում եւ մինչ բացման պահը Արեւմտյան Եվրոպայում գործող Ադրբեջանի Հանրապետության միակ հյուպատոսությունը, որ ղեկավարում է ԳԴՀ կառավարության նախկին խոսնակ, պառլամենտական պետքարտուղար Օտտո Հաուզերը: Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասի հետ Ադրբեջանի հնամյա կապերը (բազմաթիվ գերմանացիներ հենց այս երկրամասից 19-րդ դարում բնակություն են հաստատել Հարավային Կովկասի այդ տարածքում) նորոգվում են արդի տնտեսական հետաքրքրությունների շաղախով: Երկրամասի նախկին վարչապետ Գյունթեր Էոթթինգերը 2009-ին այցելել էր Ադրբեջան, նավթի ու գազի բույրը նրան՝ արդեն ԵՄ-ի էներգետիկ հարցերով հանձնակատարի պաշտոնում նորից էր տարել Բաքու, առիթ տալով ընդգծելու, թե Գերմանիայի խոշոր՝ էներգետիկ 6-րդ գործընկերը ԵՄ-ում էլ կարեւոր դերակատարում ունի: Չպետք է մոռանալ նաեւ այն հանգամանքը, որ 2011-ի մարտին կայացած տեղական ընտրություններում սոցիալ-դեմոկրատների եւ կանաչների ձեւավորած կոալիցիայում ինտեգրացիայի հարցերի նախարար է նշանակվել թուրքուհի Բիլքայ Էոնեյը: Ադրբեջանցիներին, կարծում ենք, մի հանգամանք էլ է ոգեւորել՝ հունիսին Շտուտգարտի համալսարանը, իրենց ձեւակերպմամբ՝ տուրք տալով «Բեռլինի թուրքական ճնշմանը», «չեզոք» մնալու բացատրությամբ, չէր տրամադրել Թեսսա Հոֆմանի «1912-1922-ին քրիստոնյաների հալածանքը, տարագրումն ու ոչնչացումը օսմանյան կայսրությունում» վերնագրյալ դասախոսությունը, արժանանալով մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների քննադատությանը:

Ինչ վերաբերում է Շտուտգարտում անցկացվող մշակույթի օրերի շրջանակներում Արցախի անկախության վերաբերյալ հիշյալ դասախոսությանը խոչընդոտելուն, ապա նույն քաղաքում գործող հյուպատոսության կայքէջը դրա մասին լռում է, միայն հաղորդագրությունը տեղադրված է Ադրբեջանի դեսպանության կայքէջի՝ Ղարաբաղին վերաբերող բաժնում՝ հետեւյալ բովանդակությամբ՝ «Գերմանիան չի ճանաչում ԼՂ-ի ռեժիմն ու նրա ներկայացուցչությունները», հաղորդում է Ադրբեջանում Գերմանիայի դեսպանությունը»:

Թեպետ հղում է արված Բաքվում ԳԴՀ-ի դեսպանությանը, բայց նրանց կայքէջում էլ չգտանք Ադրբեջանի դեսպանության վերոբերյալ տեքստը:

Ինչեւիցե, այս պատմության մեջ ուրիշ փաստեր էլ աղավաղված են: Մասնավորապես՝ ըստ ադրբեջանական հիշյալ աղբյուրի, որն, ի դեպ, իր հերթին հղում է անում տեղական «Թրենդ» գործակալությանը, սեպտեմբերի 2-ին Բեռլինում Ադրբեջանի դեսպանությունը նոտա է հղում ԳԴՀ-ի արտգործնախարարություն՝ «պահանջելով կասեցնել սեպտեմբերի 16-22-ը Շտուտգարտում ԼՂ անջատական ռեժիմի՝ այսպես կոչված Արցախի անկախության 20-ամյակին նվիրված հոբելյանական համերգը»: Հիշեցնենք՝ մշակութային շաբաթը նվիրված էր ՀՀ անկախության 20-ամյակին եւ դրա շրջանակներում Արցախի անկախությանը նվիրված մեկ դասախոսություն է ներառում: ԳԴՀ-ն դեռ չի գրանցել ԼՂՀ-ի ներկայացուցչություն անունը եւ 2008-ից Բեռլինում գործող «Արցախի բարեկամների միություն» հասարակական կազմակերպության հիմքի վրա ստեղծված գրասենյակը, որ Հարություն Գրիգորյանի տեղեկացմամբ վերջերս գրանցվել է «Արցախի եվրոպական կենտրոն» անվամբ, Շտուտգարտում անցկացվող մշակութային շաբաթվա կազմակերպիչներից չէ, ինչպես Ադրբեջանի դեսպանության նոտայում էր ձեւակերպված՝ «Շտուտգարտի միջոցառումների կազմակերպիչներից է նաեւ «Արցախի բարեկամներ» միությունը, որի հետ ԳԴՀ-ի պետական կամ համանման կառույցները, գործակալությունները որեւէ առնչություն չունեն»:

Ադրբեջանի դեսպանության նոտայի վերաբերյալ մեր հարցմանն ի պատասխան Բեռլինում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը ներկայացրեց սեպտեմբերի 19-ին ԳԴՀ-ի արտգործնախարարությունից իրենց ուղղված պատասխանը, թե գերմանական կողմը կարծիք չի հայտնել ադրբեջանցիներին, քանի որ սա բացառապես համայնքային կառույցի եւ տեղական իշխանությունների լուծելիք հարցն է: Իրականում Ադրբեջանի մեծ աղմուկը մեղմելու նպատակով է Շտուտգարտի քաղաքապետարանը նրանց՝ ամիսների անդուլ քարոզչությանը «ընթացք տվել» բավական ուշ:

Ադրբեջանական բողոքը, որ հիմնականում ուղղված է «ԼՂՀ ներկայացուցիչ», «Արցախի անկախություն» արտահայտություններին ստիպել է Շտուտգարտի քաղաքապետարանին՝ մասնավորապես առաջին քաղաքապետ Միշայել Ֆյոլլին Շտուտգարտի մշակութային միությանը սեպտեմբերի 16-ին նամակ ուղղել՝ ճշտելու, թե արդյոք նախօրոք համերգի եւ ժամանցի համար վարձակալած դահլիճը չի՞ ծառայելու այլ՝ քաղաքական նպատակների: Սեպտեմբերի 19-ի առավոտյան կազմակերպիչները հանդիպել են պարոն Ֆյոլլին եւ նրան ներկայացրել մշակութային ծրագիրը՝ պարզաբանելով, թե Հյուսիսային Կիպրոսի կամ Տիբեթի ներկայացուցիչ արտահայտությունների կողքին գոյության իրավունք ունի նաեւ ԼՂՀ ներկայացուցիչ ձեւակերպումը, որը «վտանգավոր» է նույնքան, որքան նախորդները, իսկ տվյալ պարագայում տարօրինակ է այն հանգամանքը, որ երրորդ երկիրն է փորձում միջամտել տեղական իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությանը: Քաղաքապետարանի թելադրանքով, այդուհանդերձ փոխզիջում եղել է՝ «20-ամյա անկախ Արցախ» դասախոսությունը կկայանա նշված վայրում, անվտանգության նկատառումներով միջոցառումը կհսկեն ոստիկանության աշխատակիցները, փոխարենը միջոցառման կայքէջում Հարություն Գրիգորյանի անվան կողքին չի լինի ԼՂՀ ներկայացուցիչ «հստակեցումը»: Երկուշաբթի՝ ժամը 19-ին սկսված դասախոսությունը, որ ունկնդրել են 7 տասնյակից ավելի ունկնդիրներ, Հարություն Գրիգորյանի տեղեկացմամբ, անցել է առանց միջադեպերի: Օրվա ընթացքում քաղաքապետարանի վրա ադրբեջանական ճնշումն այնքան ուժեղ է եղել, որ հեռախոսային գիծը «տաքացել» է, եւ իշխանությունները փորձել են հայ համայնքին համոզել միջոցառումն անցկացնել ուրիշ անգամ, այլ վայրում, նույնիսկ՝ առանց անվան բաղադրիչ զիջելու: Կազմակերպիչները չեն նահանջել եւ սիրով են ընդունել առաջիկայում նոր ծրագրով հանդես գալու առաջարկը:

Ի դեպ, սեպտեմբերի 19-ի հագեցած օրվա ժապավենը կապեց Զ յ ու դ վ ե ս թ ռ ու ն դ ֆ ու ն կ ը՝ SWR/BW (Հարավարեւմտյան ռադիոհեռուստակայանը, որ հեռարձակվում է Շտուտգարտից եւ Մայնցից), ժամը 23.30-ից եթեր սփռելով Էրիկ Ֆրիդլերի «Աղետ» ֆիլմը: Պաշտոնական այցով Բեռլինում գտնվող Աբդուլլահ Գյուլի համար ինչպիսի՜ ընդունելություն. նախ՝ Բեռլինի Հումբոլդտ համալսարանում տեղադրված ռումբի մասին լուրը, որի հետեւանքով խափանվել էր պաշտոնական այցի առաջին օրվա ողջ օրակարգը, հետո՝ չորեքշաբթի օրը Բադեն-Վյուրթեմբերգ կատարելիք այցի նախօրեին՝ «Աղետը»՝ նույն երկրամասի մայրաքաղաքից:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# «Դալար» երգի ու պարի համույթը Գուգարաց թեմում

**«Պոլսահայ համայնքի օրեր Հայաստանում» ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 19-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում տեղի ունեցավ Ստամբուլից ժամանած Մխիթարյան Սանուց միության «Դալար» երգի ու պարի համույթի 16-20-րդ դարերի (1590-2011 թթ.) Արեւմտյան Հայաստանի տարբեր քաղաքների հայկական ավանդական 85 տարազների տողանցք-ցուցահանդեսը: Խումբը Վանաձոր այցելեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հրավերով:**

**Խումբը հիմնվել է 1997 թվականի հոկտեմբերին Ժուլիա Մութլունի նախաձեռնությամբ: Նա հանդիսանում է ոչ միայն խմբի գեղարվեստական ղեկավարը, այլ նաեւ հեղինակն է ցուցադրվող տարազների:**

**Իր գոյության կարճ ժամանակահատվածում խումբն արժանացել է բարձր գնահատանքի, քանի որ համույթը հանդիսատեսին լավագույնս ներկայացնում է հայկական հին եւ ազգային տարազներն ու պարարվեստը: Այդ է թերեւս պատճառներից մեկը, որ 2006 թվականին «Դալարը» կազմեց նաեւ «Դալարիկ» խումբը, որի մասնակիցները մանուկներ են:**

**Հանդիսավոր միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ տիկին Դիանա Քամբարողլյանը:**

**Հյուրերին ողջունեց ու բարի գալուստ մաղթեց Առաջնորդ Սրբազան Հայրը եւ գնահատանքի ու օրհնության խոսքերով մեծարեց կազմակերպիչներին, խմբի անդամներին, նրանց հաջողություններ մաղթեց Ստամբուլում հայկական մշակույթը պանծացնող «Դալար» երգի ու պարի համույթին:**



**Ազգային տարազների ցուցահանդեսը հատկապես բացառիկ մի առիթ էր վանաձորցիների համար առավել լավ ծանոթանալու հայ ժողովրդի կենսակերպին, սովորույթներին, ավանդույթներին եւ ծիսական բարձրարվեստ ասեղնագործ տարազների նրբերանգներին:**

**Ցուցահանդես-տողանցքին Պարգեւ Կարիանը հանդես եկավ ազգագրական հայրենաշունչ երգերով: Խումբն արժանացավ վանաձորցիների ջերմ ու անկեղծ ընդունելությանը, բուռն ծափողջույնների եւ առատ ծաղկեփնջերի. դահլիճում թեւածում էր հայոց ազգային տոհմիկ մշակույթի շունչն ու ոգին:**

**Յուրաքանչյուր ազգի գոյատեւման եւ հարատեւման կարեւորագույն հիմնաքարերից են համարվում արվեստը, բանահյուսությունը, ճարտարապետությունը, երգն ու երաժշտությունը, որի վառ ապացույցն է «Դալար» համույթի գործունեությունը:**

**Երգչախմբի անդամները երկու օր իջեւանեցին թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարի հյուրընկալ հարկի ներքո, շրջեցին Վանաձոր քաղաքում եւ Ալավերդիում եւ ապա մեկնեցին ուխտագնացության Հաղպատ, Սանահին, Սեւանավանք եւ Սեւանա լիճ: «Դալարի» Վանաձորում երկօրյա կեցության ծախսերը հոգացել էին Առաջնորդարանն ու ԱԺ պատգամավոր, Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր հարգարժան պարոն Կարեն Սարիբեկյանը:**

**Միջոցառմանը ներկա էին մարզի մշակութային հաստատությունների, մարզային եւ քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, դասախոսներ, ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ եւ արվեստասեր հասարակություն:**

**ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ**

# Հարգանքի տուրք վաստակավորին

**Նշանավոր ուսուցիչ, վաստակաշատ մանկավարժ, խմբավար, մշակութային եւ հանրային գործիչ Գեւորգ Գանտահարյանին ճանաչում են ոչ միայն Սփյուռքում, այլեւ՝ Հայաստանում: Չնայած որ Գեւորգ Գանտահարյանը ծնվել էր Դամասկոսում, բայց միշտ իրեն համարել է հայաստանցի, ապրել ու շնչել այդ զգացումով: Ահա այսպես էին բնորոշում երեկ, սփյուռքի նախարարության կազմակերպած միջոցառման ընթացքում, որի ժամանակ կայացավ նաեւ մեծ մտավորականին նվիրված գրքի շնորհանդեսը: Հրանուշ Հակոբյանը բացելով միջոցառումը, բարձր գնահատեց Գեւորգ Գանտահարյանի գործունեությունն ու շեշտեց. «Նա մի մարդ էր, որի կյանքն անցավ շատ բեղուն, մարդ, որ իր կյանքը նվիրեց Սիրիայի եւ Լիբանանի հայկական մշակույթին...»: Այնուհետեւ նախարարը ասաց, որ Գեւորգ Գանտահարյանն արժանանում է «Կոմիտաս» ոսկե մեդալի եւ այն հանձնեց Գանտահարյանի թոռնուհուն:**

**Գանտահարյանի մասին հուշեր պատմեցին գրքի կազմող ու հեղինակ, արվեստաբան, գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանը, «Կամար» ամսագրի խմբագիր Ժիրայր Դանիելյանը, հոգեւոր հայրեր, ու նաեւ Գանտահարյանի սան Գեւորգ Հաջյանը: Վերջինս իր ուսուցչի հիշատակին կատարեց «Հայաստան երկրի դրախտավայր» երգը: Դպրեվանքի խմբավարի ամբողջ գործունեությունը, որը շատ քչերին է տրված, ընդունելի էր բոլորի կողմից անկախ կուսակցական պատկանելությունից: Նա գաղափարի մարդ էր, գաղափարի տեր. այսպես էին արտահայտվում մեծ մտավորականի հասցեին, ու նրա հիշատակը հավերժացավ տպագրված գրքով, որը Գանտահարյանի իղձն էր:**

**Այնուհետեւ Գանտահարյանի որդին՝ Բեյրութի «Ազդակ» օրաթերթի գլխ. խմբագիր Շահան Գանտահարյանը շնորհակալություն հայտնեց սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին շնորհանդես նախաձեռնելու եւ Գեւորգ Գանտահարյանի, իր հոր հիշատակին նման հարգանքի տուրք մատուցելու համար: Նաեւ շնորհակալություն հայտնեց «Փյունիկ» հիմնադրամին, որի մեկենասությամբ հնարավոր եղավ իրականացնել «Գէորգ Գանտահարեան՝ ամէնուն ուսուցիչը» գրքի տպագրությունը, որի խմբագիրն ու կազմողն է ԵՊՀ-ի դասախոս, արվեստաբան, գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանը: «Այս խորհուրդը մեծ է մեզի համար, որովհետեւ սփյուռքի մեջ կազմավորված, նաեւ մշակութային ու կրթական գործունեություն տարած մարդու մը հայրենիքի մեջ այսպիսի հիշատակումը մեծ խորհուրդ ունի բոլորիս համար», ասաց Շահան Գանտահարյանը: «Ազգի» հետ զրույցում նա ասաց. «Մեր հարաբերությունը միայն հայր եւ զավակի չէր, մենք նաեւ գաղափարական ընկերներ էինք, պարզ մարդկային շատ մտերիմ ընկերներ էինք: Հայրս շատ անմիջական ու խորքային էր իր անմիջականությամբ եւ սիրված: Իրեն նվիրված միջոցառումները փաստում են, որ այդ ընդառաջումի կարողությունն իր սիրված եւ ժողովրդական լինելու մեջ էր»:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Վանաձորցի եղբայրների մեծ հաջողությունը

Բելգիայի Լոմել քաղաքում անցկացված ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում մեծ հաջողության հասան վանաձորցի եղբայրներ Գարիկ եւ Գոռ Հարությունյանները՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Սա աննախադեպ հաջողություն է հայկական ձյուդոյի պատմության մեջ: Նշենք, որ 2009-ին Երեւանում կայացած ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Արտյոմ Բաղդասարյանը դարձել էր չեմպիոն, իսկ Դավիթ Մկրտչյանն ու Տիգրան Վարոսյանը նվաճել էին բրոնզե մեդալներ:




Գարիկ Հարությունյանը չեմպիոն հռչակվեց մինչեւ 55 կգ քաշայինների մրցավեճում: Նա հաջորդաբար հաղթեց ուկրաինացի Նիկիտա Տրենովին, բելգիացի Գերտ Մայեսին, ռուսաստանցի Սախավաթ Գաջիեւին ու մտավ կիսաեզրափակիչ: Այստեղ նրա մրցակիցն էր ադրբեջանցի Օրուջ Վալիզադան: Գարիկն այդ գոտեմարտն էլ վստահ անցկացրեց ու հաղթանակ տոնելով, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում հայ ձյուդոյիստը պարտության մատնեց վրացի Լերի Ջելիձեին եւ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

Ի դեպ, Ջելիձեն 1/16 եզրափակիչում պարտության էր մատնել քաշային այդ կարգում Հայաստանի երկրորդ ներկայացուցչին՝ Սերյոժա Ալեքսանյանին:

Եղբոր օրինակին հետեւեց 60 կգ քաշային Գոռ Հարությունյանը: Նրա հետ գոտեմարտում տատամիից պարտված հեռացան թուրք Մուրաս Դոգանը, խորվաթ Բեռնարդ Ազինովիչը, Բելգիայի ներկայացուցիչ Աղլան Կաչչիկաեւը, մոլդովացի Եվգենի Վրեմեն: Կիսաեզրափակիչում Գոռի մրցակիցը Ռուսաստանի հավաքականի անդամ Արամ Գրիգորյանն էր: Վերջինիս հետ գոտեմարտում էլ Գոռը հաղթեց: Իսկ եզրափակիչում նա պարտության մատնեց ֆրանսիացի Վինսենս Լիմարեին եւ արժանացավ ոսկե մեդալի: Արամ Գրիգորյանն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Այդ պայքարը հաջողությամբ պսակվեց: Հաղթելով լեհ Լուկաշ Կելբանինսկուն, Արամը դարձավ բրոնզե մրցանակակիր:

Քաշային այս կարգում հանդես եկած Հայաստանի մյուս պատվիրակը՝ Արսեն Թովմասյանն առաջին գոտեմարտում հաղթելով բելգիացի Քեւին Գիյսին, հաջորդ փուլում պարտվեց գերմանացի Քեւին Շուչարդին եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում Պարգեւ Սառիկյանն ու Դավիթ Ղազարյանը պարտվեցին առաջին գոտեմարտում: Նույն ճակատագրին արժանացավ նաեւ Անդրանիկ Չափարյանը (73 կգ) Իսկ 81 կգ քաշային Մհեր Թավաքալյանը պայքարից դուրս մնաց 2-րդ փուլից: Աղջիկների մրցաշարի մեր միակ մասնակից Երջանիկ Կարապետյանը (48 կգ), առաջին գոտեմարտում զիջեց ռուսաստանցի Աննա Դմիտրիեւային:

Ընդհանուր թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը նվաճած 2 ոսկե մեդալով գրավեց 5-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով Ռուսաստանի (3 ոսկե, 1 արծաթե, 6 բրոնզե մեդալ), Թուրքիայի (2+1+1), Ուկրաինայի (2+0+1) եւ Ավստրիայի (2+0+0) հավաքականներին: Ընդհանուր առմամբ մեդալների արժանացան 22 երկրների ձյուդոյիստներ:

# Մեյվեզերը նոկաուտի ենթարկեց անպարտ Օրտիզին

Ամերիկացի բռնցքամարտիկ Ֆլոյդ Մեյվեզերը նվաճեց միջին քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ Լաս Վեգասում կայացած մենամարտի 4-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով իր հայրենակից, չեմպիոնական գոտու տեր Վիկտոր Օրտիզին: Ճիշտ է, այդ հաղթանակը տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց:



Առաջին 3 ռաունդներն անցան գրեթե հավասար պայքարում: 4-րդ ռաունդում Օրտիզը ոչ մարզական արարք դրսեւորեց՝ գլխով հարվածելով մրցակցին, որի հետեւանքով Մեյվեզերի շուրթը պատռվեց: Մրցավարն այդ արարքի համար Օրտիզից միավոր հանեց: Վերջինս մոտեցավ մրցակցին ու ներողություն խնդրեց, ապա բռունցքները ներքեւ իջեցրած հետ գնաց, որպեսզի վերսկսի մենամարտը: Եվ հենց այդ պահին հետեւեցին Մեյվեզերի երկու հուժկու հարվածները ձախ եւ աջ բռունցքներով ու Օրտիզը հայտնվեց ռինգի հատակին: Մրցավարը բացեց հաշիվը եւ նոկաուտ գրանցեց: Երբ հայտարարվեց Մեյվեզերի հաղթանակի մասին, Օրտիզի թիմը փորձեց հաշվեհարդար տեսնել մրցակցի նկատմամբ, սակայն հաջողվեց խուսափել ծեծկռտուքից:

Բռնցքամարտիկներից շատերն արդարացրել են Մեյվեզերին, նշելով, որ իրենք ռինգում եւս այդպես կվարվեին: Նրանք մեղավոր են համարում Օրտիզին, որը չպետք է զգոնությունը կորցներ: Մեյվեզերն էլ նշել է, որ սա բռնցքամարտ է եւ ռինգում մշտապես հարկավոր է ձեռքերը պարզած պահել:

Ֆլոյդ Մեյվեզերը շարունակեց իր անպարտելի մենամարտերի շարքը պրոֆեսիոնալ ռինգում: Նա 42-րդ հաղթանակը տոնեց: Վիկտոր Օրտիզի համար հերթական մենամարտը 34-րդն էր: Դրանցից 29-ում նա հաղթել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 3 պարտություն:

Վիկտոր Օրտիզը մենամարտից հետո հայտարարել է, որ կցանկանար ռեւանշի հասնել մրցակցի նկատմամբ, եթե իրեն նման հնարավորություն ընձեռեին:

Մենամարտից հետո կայացած մամուլի ասուլիսում խոսք գնաց Մենի Պակյաոյի հետ հնարավոր մենամարտի կազմակերպման մասին, որին Ֆլոյդ Մեյվեզերը հետեւյալ պատասխանը տվեց. «Այդ տղան չի ցանկանում մենամարտել: Նա մրցում է միայն Ռիկի Հատոնի, Օսկար Դե Լա Հոյայի, Շեյն Մոզլիի նման բռնցքամարտիկների հետ: Նա միայն ընդհանուր գումարի 30 տոկոսն է տրամադրում մրցակցին: Իսկ ես 100 տոկոսանոց շահույթ եմ ստանում: Այնպես որ Պակյաոն ինձ հարկավոր չէ: Ամեն անգամ ռինգ դուրս գալով, կարող եմ 70 մլն դոլար վաստակել: Որտե՞ղ էր նա 1996-2001-ին, երբ ես էի բռնցքամարտում իշխում: Երբ հնչում է նրա անունը, բոլորը նշում են, որ նա այն բռնցքամարտիկն է, որի մենամարտը Մեյվեզերի հետ կցանկանային դիտել: Իսկ երբ հնչում է Ֆլոյդ Մեյվեզեր, բոլորը նշում են, որ նա բռնցքամարտի պատմության մեջ լավագույններից մեկն է»:



# Հայ շախմատիստներից հինգը հավակնում են մեդալների

Բուլղարիայի Ալբենա քաղաքում ավարտին է մոտենում շախմատի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը: Ավարտական տուրից առաջ 5 հայ շախմատիստներ հավակնում են խաղարկվող մեդալներին:

Մրցանակակիր դառնալու ամենաիրական հնարավորությունն ունի Հայկ Մարտիրոսյանը, որը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում 8 տուրից հետո 6,5 միավորով Նիկիտա Մորոզովի, Իգոր Կուդելյայի, Ալեքսեյ Սարանայի եւ Վլադիմիր Պետրովի հետ գլխավորում է աղյուսակը: 8-րդ տուրում ընդհատվեց Հայկի 5 անընդմեջ հաղթանակների շարքը: Նա ոչ-ոքի խաղաց բուլղարացի Վլադիմիր Պետրովի հետ: Ավարտական տուրում Մարտիրոսյանը սեւերով կխաղա առաջատարներից մեկի՝ Ալեքսեյ Սարանայի հետ:

Մրցանակակիր դառնալու լավ հնարավորություններ են պահպանում նաեւ Հովհաննես Գաբուզյանն ու Կարեն Գրիգորյանը, որոնք մասնակցում են մինչեւ 16 տարեկանների մրցաշարին: Գաբուզյանը սեւերով հաղթելով ՖԻԴԵ-ի վարպետ Իվան Յուդինին, վաստակեց 6,5 միավոր: Կարեն Գրիգորյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Դավիթ Սիմոնի հետ եւ իր ակտիվում ունի 6 միավոր: Այստեղ առաջատարն իտալացի Դավիթ Անտոնն է, որն ունի 7 միավոր: 6,5 միավոր է վաստակել նաեւ ուկրաինացի Ալեքսանդր Բորտնիկը: Ավարտական տուրում Գաբուզյանը սպիտակներով խաղալու է Կասպեր Դրոզդովսկու հետ, իսկ Գրիգորյանի մրցակիցը կլինի Կանան Իզատը:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Հայկ Վարդանյանը 6 միավորով առաջատարների խմբում է: Հայկը 8-րդ տուրում սեւերով հաղթեց Մաքսիմ Լագարդեին: 5,5 միավոր ունի Սամվել Տեր-Սահակյանը, որը եւս հաղթանակ տոնեց Ռուսլան Կուրայանի հետ պարտիայում: Տարիքային այս խմբում աղյուսակը 6,5 միավորով գլխավորում են Նիլս Գրանդելիուսը, Վադիմ Մոիսեենկոն եւ Հուգո Տենը: 9-րդ տուրում Հայկ Վարդանյանը կմրցի Դանի Ռազնիկովի հետ, իսկ Սամվել Տեր-Սահակյանի մրցակիցը կլինի Նիկոլայ Բորտնիկը:

Հայ շախմատիստուհիներից բոլորից հաջող է հանդես գալիս Հայաստանի մինչեւ 18 տարեկանների չեմպիոնուհի Մարիա Գեւորգյանը, որը կարող է մրցանակակիր դառնալ նաեւ Եվրոպայի առաջնությունում: Մարիան 6,5 միավորով ընթանում է 2-րդ տեղում՝ ընդամենը կես միավոր զիջելով մոլդովացի Դիանա Բացիուին: 9-րդ տուրում նրանք մրցելու են միմյանց հետ եւ այդ պարտիան էլ կանխվանի Եվրոպայի չեմպիոնուհուն: Վճռորոշ այդ պարտիայում Մարիան խաղալու է սեւերով: 8-րդ տուրում նա հաղթեց միջազգային վարպետ Խայալա Աբդուլլային: 6-ական միավորով առաջատարներին հետապնդում են Մերի Արաբիձեն եւ Սաբինա Գուլիեւան:

# Ազատոճայինների հերթական ձախողումը



Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականը հերթական անգամ անհաջողության մատնվեց: Ստամբուլում անցկացված ըմբշամարտի աշխարհի առաջնությունում մեր 7 ըմբիշներից եւ ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Միակ սփոփանքն այն էր, որ Միհրան Ջաբուրյանը 55 կգ քաշային կարգում Լոնդոնի օլիմպիադայի ուղեգիր նվաճեց՝ գրավելով 5-րդ տեղը: Նա մեր ըմբիշներից առավել հաջող հանդես եկավ:

Առաջին գոտեմարտում Միհրանը զիջեց ռուսաստանցի Վիկտոր Լեբեդեւին: Վերջինս հաջող անցկացրեց մրցաշարը եւ հռչակվեց աշխարհի չեմպիոն՝ հնարավորություն ընձեռելով Ջաբուրյանին պայքար մղելու ինչպես բրոնզե մեդալի, այնպես էլ օլիմպիական ուղեգրի համար: Խնդրի առաջին մասը հաջողությամբ լուծել նրան չհաջողվեց: Առաջին երկու գոտեմարտերում հաղթելով մեքսիկացի Քրիստոբալ Օլվերա Լոպեսին եւ կուբացի Ջամիզո Մարքյուեզին, վճռորոշ հանդիպման ժամանակ հայ ձյուդոյիստը պարտություն կրեց ղազախ Դաուլետ Նիյազբեկովից:

Բրոնզե մեդալի համար պայքարելու իրավունք էր ստացել նաեւ Ռուսլան Բասիեւը: Գերծանրքաշայինների մրցավեճում հաղթելով Պալաուի ներկայացուցիչ Ֆլորիան Թեմենգիլին, Բասիեւը 2-րդ գոտեմարտում զիջեց ռուսաստանցի Բիլյալ Մախովին, որը հասավ մինչեւ եզրափակիչ: Իսկ բրոնզե մեդալի համար առաջին իսկ գոտեմարտում Բասիեւը պարտվեց մոնղոլ Յարգալսայխան Չուլունբաթին:

Նարեկ Սանոյանը (60 կգ), Դավիթ Սաֆարյանը (66 կգ) եւ Հաջիմուրադ Նուրմագոմեդովը (84 կգ) պարտություն կրեցին առաջին գոտեմարտում: Հարություն Ենոքյանը (96 կգ) պայքարից դուրս մնաց 2-րդ փուլում, իսկ Մուսա Մուրթազալիեւը (74 կգ) հասավ մինչեւ քառորդ եզրափակիչ, որտեղ զիջեց ադրբեջանցի Աշրաֆ Ալիեւին:

# Արդշինինվեստբանկի հրաձիգները գրավեցին 2-րդ տեղը

Հայաստանի բանկային համակարգի հրաձգության մրցումներում հաջող հանդես եկան Արդշինինվեստբանկի հրաձիգները՝ զբաղեցնելով 2-րդ տեղը: Թիմի կազմում էին բանկի անվտանգության դեպարտամենտի ռեժիմի եւ պահպանության բաժնի պետ Իգոր Վլասենկովը, պահպանության գլխավոր տեսուչ Արմեն Սերոբյանը եւ ավագ տեսուչ Հայկ Բադալյանը: Հաղթող ճանաչվեց «Հայինկասացիա» ընկերության թիմը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

# Արժեւորենք ու պահպանենք

1988 թվական՝ ականի պես պայթեց Ղարաբաղյան շարժումը, որը կոչված էր լուծելու ոչ միայն Արցախը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու, այլեւ համազգային ու պետական շատ ու շատ խնդիրներ:

Ազգային ինքնագիտակցության այս աննախադեպը զարթոնք առաջացրեց: Պատասխանը՝ ԽՍՀՄ ղեկավարության ակնհայտ անհանդուրժողական վերաբերմունքը, որի ամենավառ դրսեւորումն էին Ադրբեջանի կազմակերպած ջարդերը Բաքվում ու Սումգայիթում, պարտադրած պատերազմը...

Ազգային միասնությունն ու անկոտրում ոգին փորձության ենթարկելու օրհասական ժամանակներ...

Քիչ չէին այն <<ազգային գործիչները>>, ովքեր ջանք չէին խնայում շարժումը կենտրոնից ցանկալի հունով ուղղորդելու, ասել է թե՝ այն լռեցնելու համար:

Բայց տեւական ժամանակ պետականությունը կորցրած հայը չէր կորցրել պետական մտածողությունն ու քաղաքական իմաստությունը:

Հանրապետության քաղաքական կյանքում շրջադարձային փոփոխությունների սկիզբը դրվեց 1990 թվականի մայիս-հունիս ամիսներին կայացած Հայաստանի գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններով:

1990 թվականի օգոստոսի 23-ին նորընտիր խորհրդարանն ընդունեց <<Հռչակագիր Հայաստանի անկախության մասին>>:

Ընդամենը երկու տարի առաջ՝ 1988 թվականին, եթե որեւէ մեկը բարձրաձայներ նման հնարավորության մասին, գուցե հավատայինք, գուցե ոչ...

Բայց հաստատ է մի բան՝ հայկյանները չեն հանդուրժում շղթաներ, ո՛չ մի տեսակ կապանքներ...

Ապացույցը՝ հայ ժողովրդի հավաքական կամքը, ազատատենչությունը խտացված դրսեւորվեց 1991 թվականի սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքներում:

Եռատառ հաստատական մի բառով ողջ մի ժողովուրդ ամրագրեց իր կամքը, խոսուն ձայնը Երկիր մոլորակում: Այո՛, մեր ազգային անկախ պետականությանը, այո՛, մեր իմաստությանը, այո՛, մեր հարատեւությանը:

Այո՛...

Ուրեմն քայլենք առաջ՝ հայացք գցելով անցած ուղուն, քանզի <<Ով պատմություն ունի՝ չի կարող ես չնայել: Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ>>:

Ուրեմն արժեւորե՛նք ու պահպանե՛նք այն, ինչ ձեռք ենք բերել պատերազմի, զրկանքների, հազարավոր զոհերի, բայց եւ հայ հավատի, սիրո ու միասնականության շնորհիվ:

Արժեւորե՛նք ու պահպանե՛նք մեր ծանրակշիռ տեղը միջազգային ասպարեզում, մեր ռազմական, մշակութային, սպորտային ու բազում-բազում ձեռքբերումները... Հայ գիտնականի պրպտուն միտքը, շինականի հերկած հողը, մանկան ճիչը...

Արժեւորե՛նք ու պահպանե՛նք մեր կիրթ ու շրջահայաց երիտասարդությանը, որը կրողն է մեր պետականության, որը նվիրյալն է հայոց աշխարհի շենացման, որը առհավատչյան է հայի լինելիության...

Արժեւորե՛նք ու պահպանե՛նք Հայաստանի Հանրապետությունը...

Տարեդարձդ շնորհավո՛ր, քսանամյան հանրապետություն...

**ԱՆՈՒՇ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
**Երեւան, N:91 դպրոցի կրթական մասնագիտացված աջակցությունների գծով փոխտնօրեն**

# Լեւոն Սարյանի հին մետաղադրամների հավաքածուն մրցանակների է արժանացել

**«Գրավիչ եւ ուսուցողական ցուցադրություն կազմակերպելը մեր մշակութային եւ պատմական ժառանգությունը օտարներին ներկայացնելու միջոց է, որից ե՛ւ դիտողն է հարստացնում իր գիտելիքները, ե՛ւ պատրաստողը: Վերջինս պարտավոր է հսկայական նախապատրաստական որոնումներ կատարել եւ ճշգրտել որոշ մանրամասներ: Ինչքան ինձ հայտնի է, ուրիշ ոչ ոք Ամերիկայում նման ցուցահանդես չի կազմակերպել», նշել է դրամագիտության մասնագետ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, դոկտ. Լեւոն Սարյանը, որը վերջին ամիսներին, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի, երեք դրամագիտական ցուցահանդեսների է մասնակցել Միլվոքիում (Վիսկոնսինի նահանգ, ԱՄՆ) եւ Չիկագոյում (Իլինոյսի նահանգ, ԱՄՆ), արժանանալով ոսկե մրցանակների:**

**Դրանցից առաջինը՝ «Հայաստանի տառապանքները: 1915 թվի հայերի ցեղասպանության հիշատակի մեդալները» վերնագրով, Միլվոքիում համարվել է «լավագույնը ցուցահանդեսում» եւ պարգեւատրվել մեկ տասներորդ ունցիա (1 ունցիան = 28.3 գրամ) չափի մաքուր ոսկեդրամով:**

**Երկրորդը՝ «Միջնադարյան Հայաստանի մետաղադրամներ» խորագրով, Ռոուզմոնտում (Իլինոյս) նվաճել է մեկ չորրորդ ունցիա կշռող մաքուր ոսկեդրամ մրցանակը՝ Կիլիկյան Հայաստանից ավելի քան 250 արծաթե մետաղադրամների հազվագյուտ հավաքածուի համար:**

**Եվ երրորդը՝ «Հայաստան, 1919: Գեղարվեստական թղթադրամներ» անվան տակ, նույնպես Ռոուզմոնտում ստացել է մեկ տասներորդ ունցիա չափի մաքուր ոսկեդրամ: «Կենտրոնական նահանգների դրամագիտական ընկերության» Ռոուզմոնտում գումարած համագումարի օրերին կազմակերպված այս ցուցահանդեսին Սարյանը ներկայացրել է Արշակ Ֆեթվաճյանի 1919 թվին պատրաստած Հայաստանի Հանրապետության գրավիչ թղթադրամները:**

**«Մրցունակ ցուցանմուշ պատրաստելու համար դու թանգարանի կուրատորի մանրազնին աշխատանքը պարտավոր ես կատարել: Համապատասխան ուսումնասիրությունից հետո պետք է կարողանաս սեղմ, բայց ճշգրիտ բացատրություններով եւ աչքի ընկնող դիզայնով ներկայացնել հավաքածուն: Ժյուրիները խստապահանջ են եւ բծախնդիր ամեն մի մանրուքի հարցում», ավելացրել է Լեւոն Սարյանը:** Հ. Ծ.

## ԿՈՐԵԼ Է

«Երևանգիրք» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի վկայականը, գրանցման N 273 140 01220: Համարել անվավեր:

ՉԵԽԻԱ

# Հայաստանի անկախության տոնին նվիրված ընդունելություն եւ ցուցահանդես Պրահայում

Սեպտեմբերի 19-ին չեխական մայրաքաղաքի «Պրահա» հյուրանոցում ՀՀ դեսպանությունը պաշտոնական ընդունելություն էր կազմակերպել՝ նվիրված Հայաստանի Անկախության տոնին: Ներկաների թվում էին Չեխիայի արտգործնախարարության եւ խորհրդարանի ներկայացուցիչներ, օտարերկրյա դեսպաններ, հասարակական կառույցների ղեկավարներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանը ողջունեց ներկաներին եւ հակիրճ ելույթով անդրադարձավ Հայաստանի ներկա քաղաքական ու տնտեսական իրավիճակին, Ղարաբաղյան խնդրին եւ հայ-չեխական հարաբերություններին: Ներկաները ջերմ ծափողջյուններով դիմավորեցին դաշնակահար Վազգեն Վարդանյանի ելույթը, որ կատարեց ոչ միայն Հայաստանի ու Չեխիայի հիմները, այլեւ հայ եւ օտար կոմպոզիտորների ստեղծագործություններ: «Պրահա» հյուրանոցի սրահում Անկախության տոնի առիթով բացվել էր նաեւ Չեխիայում ստեղծագործող հայ նկարիչների գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը: Նկարչության սիրահարները ցուցահանդեսը մի անգամ եւս կարող են տեսնել սեպտեմբերի 21-ին Պրահայի Հուսովա 8 հասցեում գտնվող GH art Gallery ցուցասրահում ժամը 18.00-ին:

**«ՕՐԵՐ» եվրոպական ամսագիր**

# Թողարկվել է «Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011թթ.)» արծաթե հուշադրամը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, իսկ ներքեւի մասում՝ անվանական արժեքը՝ «5000 ԴՐԱՄ»: Հուշադրամի եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» մակագրությունն է հայերեն եւ անգլերեն լեզուներով եւ թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են արծիվ ու կռունկ՝ որպես հայազգի եւ պետականության հոգեւոր ու ռազմական ուժի, ազատության ու խաղաղության խորհրդանիշեր: Վերեւի մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿ» մակագրությունն է հայերեն լեզվով, իսկ ներքեւում՝ ՀայաստանիՀանրապետության 20-ամյակին նվիրված խորհրդանշանը՝ «2011», եռագույն ձեւավորմամբ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հասվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 5000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 168,1 գ |
| Տրամագիծը | 63,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | հարթ, համարակալված |
| Տպաքանակը | 300 հատ |



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը (քմ) | Շինության մակերեսը (քմ) | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | *Աճուրդով օտարվող գույք* | | | | |
| 1 | Տիգրան Մեծի պողոտա թիվ 36 | կաթսայատուն | 218.5 | 158.8 | 14,700,000 |
| 2 | Կաթսայատուն Զ. Քանաքեռցու 127 | կաթսայատուն | 338.3 | 285.4 | 10,400,000 |
| 3 | Կոմիտասի պող. թիվ 42/5 | կաթսայատուն | 163 | 145.2 | 12,600,000 |
| 4 | Բաշինջաղյան փող.հ.185/1 | կաթսայատուն | 321.07 | 270.4 | 14,000,000 |
| 5 | Մամիկոնյանց փողոց թիվ 40/5 | կաթսայատուն | 139.89 | 113.8 | 7,600,000 |
| 6 | Ֆուչիկի փողոց 1-ին նրբ. 5/1 | կաթսայատուն | 392.9 | 392.9 | 8,400,000 |
| 7 | Շինարարների փողոց թիվ 29/8 | կաթսայատուն | 189.15 | 158.7 | 3,060,000 |
| 8 | Տիգրան Մեծի պողոտա 29ա շենք թիվ 34 | ոչ բնակելի տարածք | | 11.7 | 900,000 |
| 9 | Քաջազնունի 14 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 120.9 | 2,500,000 |
| 10 | Այգեստան 9 փողոց 21շ թիվ 2 | ավտոտնակ | | 18.6 | 1,850,000 |
| | *Կրկնաճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | | |
| 1 | Միկոյան փող., 15/2 | կաթսայատուն | 311.24 | 282.00 | 15,400,000 |
| 2 | Մառի փող., 2/5 | կաթսայատուն | 161.85 | 138.00 | 7,200,000 |
| 3 | Գալշոյան 19/1 | կաթսայատուն | 159.96 | 137.40 | 12,700,000 |
| 4 | Աթոյան անց., հ11/2 | կաթսայատուն | 436 | 436 | 25,800,000 |
| 5 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 164 | 164 | 11,000,000 |
| 6 | Ճառագայթային փող., 136/1 | կաթսայատուն | 316 | 283 | 22,700,000 |
| 7 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 159 | 159 | 8,800,000 |
| 8 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254 | 237 | 26,600,000 |
| 9 | Շիրակի 56 | կաթսայատուն | 255 | 229 | 8,100,000 |
| 10 | Բակունցի 7/1 | կաթսայատուն | 151 | 138 | 5,500,000 |
| 11 | Ավետիսյան փող., 51/1 | կաթսայատուն | 285 | 321 | 15,600,000 |
| 12 | Նոր-Նորք 8-րդ մ/շ 27/5 | կաթսայատուն | 158 | 134 | 5,500,000 |
| 13 | Վիլնյուսի փող., 121/1 | կաթսայատուն | 164 | 139 | 2,500,000 |
| 14 | Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4 | կաթսայատուն | 241 | 210 | 10,200,000 |
| 15 | Վիլնյուսի փող., 113/4 | կաթսայատուն | 241 | 212 | 8,400,000 |
| 16 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 243 | 213 | 8,400,000 |
| 17 | Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2 | կաթսայատուն | 138.0 | 115.7 | 8,600,000 |
| 18 | ԿԶՀ Եռանկյունի թաղամաս 1/2 | կաթսայատուն | 306.9 | 306.9 | 12,600,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ հոկտեմբերի 5-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ հոկտեմբերի 5-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝20.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: